


Նարինե Ավագյան

# Ես՝ առանց ինձ

Բանաստեղծություններ



Երևան  
Հեղինակային հրատարակություն

2012թ.

ՀՏԴ 891.981-1 Ավագյան

ԳՄԴ 842-5

Ա770

Ավագյան Նարինե

Ա770 Ես՝ առանց ինձ: Բանաստեղծությունների ժողովածու

Նարինե Ավագյան

Հեղինակային հրատարակություն, 2012.-100 էջ

Բանաստեղծությունների այս հեղինակային ժողովածուն իր մեջ ներառնում է հեղինակի կողմից գրված բանաստեղծությունների մի ամբողջական շարք, որի մեջ գերակշռում են սիրային բանաստեղծությունները: Այն պարունակում է 81 բանաստեղծություն: Բանաստեղծությունները գրված են ինչպես չափածո, այնպես էլ արձակ ոճով: Շարքում տեղ են գտել նաև փիլիսոփայական, հայրենասիրական գործեր: Այն արտացոլում է հեղինակի սերը հայրենիքի, կյանքի, բնության, մարդկության, երեխաների, և, որ ամենակարևորն է, սիրած էակի նկատմամբ:

Հեղինակը փորձել է ի մի բերել և ներկայացնել իր լավագույն ստեղծագործությունները: Այս գիրքը ծնվել է հեղինակի՝ պոեզիայի նկատմամբ ունեցած մեծ սիրո արդյունքում:

Գրքում տեղ են գտել նաև նկարներ, որոնց հեղինակն է Վիկտորյա Հովհաննիսյանը /Երևանի Մուրացանի անվան հ.18 դպրոց, 9րդ դասարան: Նկարները ստեղծված են հատուկ գրքի համար՝ բանաստեղծությունների խորագրերին համապատասխան:

ՀՏԴ 891.981-1 Ավագյան

ԳՄԴ 842-5

ISBN 978-9939-0-0406-8

©Ավագյան Նարինե, 2012

Նարինե Ավագյան

# Ես՝ առանց ինձ

Բանաստեղծություններ

Երևան  
Հեղինակային հրատարակություն  
2012թ.

## Միքելի՛ ընթերցող.

Նույնիսկ չգիտեմ ինչից սկսել: Ջարմանալի զգացողություն է պարուրել հոգիս, ու թվում է, թե ևս մեկ անգամ ու կրկին մայրանում եմ: Այս անգամ զավակիս անունն է<< Ես՝ առանց ինձ>>: Հավատացնում եմ, որ այն երկար ինքնաքննադատության և անկեղծ աշխատանքի արդյունքում է լույս աշխարհ եկել, որի համար անչափ ուրախ եմ: Գրքիս ստեղծման ու այսօրվա գոյության համար պարտական եմ ազգիս մեծագույն ուսուցիչներին, որոնց անփոխարինելի գոհարների ընթերցման արդյունքում է ծնվել ու մեծացել հոգուս մեջ սեր դեպի հայ պոեզիան:

Ասում են, որ բանաստեղծ լինելու համար հարկավոր է հաճախ սիրահարվել, քանզի լավագույն բանաստեղծությունները սովորաբար ծնվում են իրական կերպարներին, ո՛չ թե անգո մեկին սեր խոստովանելիս: Միքելինե՛րս, թույլ տվե՛ք չհամաձայնել այս կարծիքի հետ: Ու հավատացա՛ծ եղե՛ք, որ դրա համար իմ հիմնավոր պատճառներն ունեմ:

Իմ կյանքում միայն մեկ սեր ունեմ, որը ստացված է, երջանիկ ու փոխադարձ: Սակայն դա չի խանգարել ինձ ստեղծագործել՝ բազում գործեր նվիրելով անպատասխան սիրուն: Իսկ ոգեշնչման աղբյուր հանդիսացել ու շարունակում են հանդիսանալ ինձ համար ընթերցած յուրաքանչյուր գրքի կամ դիտած ֆիլմի հերոսը կամ հերոսուհին, նրա ապրած կյանքն ու զգացմունքը: Այստեղ ճիշտ կլինի մեջ բերել Ռիչարդ Բախի հետևյալ խոսքերը.<<Եթե դու ինչ-որ ժամանակ վարժվես ապրել որպես հորինված կերպար, կհասկանաս, որ հորինված բնավորությունները երբեմն ավելի՛ իրական են, քան մարմին ու սիրտ ունեցող մարդիկ>>: Հենց այդպիսի հոգեվիճակում էլ հայտնվում եմ՝ ես յուրաքանչյուր բանաստեղծության ծնունդից առաջ:

Հանձնում եմ ձեր դատին իմ խոհերն ու տրամադրությունը կյանքի առկա գործոնների նկատմամբ՝ մաղթելով ձեզ հետաքրքիր ու արդյունավետ ընթերցում:

Գիրքս նվիրում եմ կյանքիս միակ ու անփոխարինելի սիրուն՝ իմ ամուսնուն...

## Խոստովանություն

Բարև...Ես ուզում եմ հայտնել քեզ մի բանի մասին, ինչը դու վաղուց արդեն գիտես: Պարզապես չէիր կարող չիմանալ... Չէ՞ որ ես քեզ ուղղակի բառերով չեմ ասել: Այն ծեծված, բայց յուրաքանչյուրի շուրթերին նոր շունչ ստացած բառերով, որոնցից այնպես եմ խուսափում, կարծես համաճարակից եմ փախչում: Ու չեմ գիտակցում, որ երբ վախենում եմ հիվանդությանս անունը բարձրաձայն ասել, դրանից ես բոլորովին էլ չեմ առողջանում: Ու ցավս էլ չի թեթևանում: Ես նույն հիվանդն եմ: Այն անհույս հիվանդը, որն ընդամենը երեք բառ չի արտաբերել քո ներկայությամբ, մինչդեռ հարյուրավոր անգամներ ասել է այդ բառերը իր մտքում, երազում, նկարիդ առջև, իր հոգու խորքում...

Բայց սպասիր...Մի՞թե խոստովանել միայն բառերով է կարելի: Իսկ հայա ցքը... Չէ՞ որ այն ավելի, քան խոսուն է: Լավ, ես կփորձեմ:

Երբ տեսնում եմ քեզ, իմ հոգու անափ ալեկոծությունը սիրտս վերածում է փոթորկոտ ալիքների վրա տատանվող փոքրիկ մակույկի, ու ինձ թվում է՝ ես ուր որ է այդ մակույկից կրնկնեմ սիրտ ալեծուփ ծովի մեջ, որտեղից էլքը մեկն է. խորասուզում...

Ու հիմա, այս ամենից հետո ինչպե՞ս չասեմ, որ իմ կյանքն անիմաստ է ունայն է դառնում հենց միայն այն մտքից, որ չեմ տեսնելու քեզ, չեմ ժպտալու քեզ, չեմ խոսելու քեզ հետ... Աչքերով...Բայց սպասիր. իսկ ավելի հեշտ չէ՞ր արդյոք պարզապես ասել.

<<Ես սիրում եմ քեզ>>:

Տե՛ր իմ Աստված, մի՞թե ես դա արեցի...



## Մի՛ թարգմանիր ինձ...

Կարծես իրար չենք հասկանում,  
Այլ լեզվով ես խոսում կարծես,  
Ես փորձում եմ, անվե՛րջ փորձում,  
Վերձանե՛լ քեզ, թարգմանե՛լ քեզ:  
Ու մերթընդմերթ հնչում են ինձ ծանոթ բառեր,  
Ու ես, կառչած հույսի վերջին աղոտ շողից,  
Սկսում եմ մեղքի մթին իմ քարայրում  
Հույսե՛ր փնտրել, լույսե՛ր փնտրել:  
Լույսեր, որոնք ինձ ցույց կտան ճամփան կյանքի,  
Քեզ կարդալու՛, թարգմանելու՛, հասկանալու՛...  
Բայց չի ստացվում...  
Շատ խրթին է ու շատ բարդ է հոգուդ լեզուն...  
Ու չե՛մ ուզում կրկին խաբվել լուրթ երազի իմ պատրանքով,  
Մի անհատնո՛ւմ քամահրանք, մի խենթություն խելակորույս  
Պարուրում է միտքս անպարտ,  
Ու ես կրկին ցած եմ նետում վե՛հ քարայրից հոգի՜ս հպարտ:  
Ձեռքս վերցնում քեզ թարգմանող բառարանը  
Ու փորձում եմ, նորի՜ց փորձում  
Գտնել այնտեղ ծանոթ բառեր,  
Իմ մթագնած հոգուն հարի՜ր, լուսաբանող անգո խոսքեր...

Բայց իզո՛ւր է: Դու ասում ես...  
Մի՛ թարգմանի՜ր...  
Ես չե՛մ ուզում...  
Կարդա դու ինձ, թե կարող ես, ԲՆԱԳՆՈՎ...  
Ու հասկացա՛ խորհուրդը քո քաղցր խոսքի:  
Գիտե՛մ լեզուն, որով պիտի ընթերցեմ քեզ ու հասկանամ...  
Մի՛րո՛ւ լեզուն...  
Պա՛րզ, անմարմի՛ն ու անան՛ուն...  
Ու հանդարտվե՛ց հոգիս հպարտ:  
Ու հասկացա շա՛տ պարզ մի բան.  
Երբ սիրում ես, հարկավո՛ր չէ  
Ո՛չ թարգմանիչ, ո՛չ բառարան...





## Իմ քեզագուրկ ես-ը


Դու տխուր ես, ինչու՞,  
Չէ՞ որ ինքդ էլ գիտես՝  
Այսպես անհնա ր է, ցավո՞ւտ է այսպես...  
Կարծես երկու հասած  
Ու խելահաս մարդիկ  
Որոշել են դառնալ  
Բախտի երկու հատիկ,  
Ամպի երկու ծվեն,  
Երկու աղբյուր ր սարի,  
Որոնք կհագեցնեն ծարա՞ֆս ուրիշների,  
Բայց գետեր չեն ցավոք ու ոչ էլ թե առվակ,  
Որ իրա ր լրացնեն, դառնա՞ն իրար վտակ:  
Ու գնու՞մ ես...

Ասես թաղում պիտի լինի...  
Ու մեռել է կարծես իմ քեզագուրկ ես-ը...

Ու տխուր եմ, ինչու՞ .  
Չէ՞ որ ի՛նքս էլ գիտեմ՝  
Անկարո՞ղ եմ տանել  
Խոսքե՞րը քո հատու...  
Իմ քեզագուրկ ես-ը  
Կապրի՞ արդյոք տեսնես:  
Մարդն առանց թթվածնի  
Մի թե կապրի, կասե՞ս:  
Մարմինն՝ առանց հոգի՞,  
Հավատն՝ առանց ոգի՞...

Իմ քեզագուրկ ես-ը...  
Գուցե՞ արդեն ու՞ չէ,  
Չապրի՞ արդեն գուցե...

Ու թող հարցնեն հիմա՝  
Ինձ՝ խելահաս մարդո՞ւս  
Ի՞նչ է հոգին իմ զգում,  
Իմ ես-ն ինչ է ուզում:  
Այնժամ գուցե ասի  
Իմ քեզագուրկ ե՛ս-ը,  
Որ կյանքն առանց սիրո  
Չարժի՞ նույնիսկ կեսը...



## Լավատեսը...

Ասում են, թե լավատես եմ,  
Որ չե՛մ տեսնում հոգում սև դև,  
Ունի հոգիս մե՛կ ճերմակ թև  
Ու քողարկված անհո՞ւն ծարավ,  
Որին չկա լի հագեցում...  
Ճի՛շտ են ասում՝ լավատես եմ...

Ուզում եմ ես լավը տեսնել, ու տեսնում եմ:  
Չե՛ն հասկանում, որ թե կուգես այս աշխարհում տեսնել սրտի  
ուզա՛ծը քո,

Պիտի նայես փա՛կ աչքերով, բայց բաց սրտով՝  
Ունենալով մեծ աշխարհում մի սեփական՝ն, փոքրիկ աշխարհ:  
Ու մտնելով հավատքիդ մեջ՝ պիտ կառուցես քո՝ տաճարը,  
Ուր ամեն ինչ լույսով պատված  
Չկա կեղծի՛ք ներս սպրդած...

Ամեն բառով քո աղոթքի  
Դու ստանում ես նո՛ր գոյություն,  
Նո՛ր էություն քո ա՛յն ես-ին,  
Որ խոհե՛մ է, սպասե՛լ գիտի...  
Լավատես ե... Եվ ինչու՞ չէ

Ունենալով ծածուկ կարոտ ներքին վախի՝  
Չի՛ խոռվում ու չի՛ տալիս վերջ իր կյանքին  
Ու չի՛ հնչում իր տաճարում կեղծ մի աղոթք...

Իր աչքերը ի՛նքն է փակել,  
Բացել հոգի՛ն, սի՛րտը բացել,  
Դարձել անկեղծ ու անառիկ,  
Ե՛վ լավատես, և՛ բացառիկ...



## Անտարբերությամբ լցված հոգին

Այնտե՛ղ, հեռվու՛մ, ինչ-որ մի տեղ  
Ապրում է մի բազմախորհուրդ,  
Անտարբերությամբ լցված մի հոգի  
Առանց մարմնի...

Ու զարմանալի հրաշքի տեսքով  
Հայտնվում է նա տխուր այն մեկին,  
Ով դրա կարիքն հիրավի ունի,  
Հայտնվում է նա ու փրկում կրկին  
Հոգի՛ն անտարբեր, հոգի՛ն անմարմին...

Քնքշությո՛ւն, տխրա՛նք, աստղացած արցու՛նք,  
Մութ ու ցուրտ վիհե՛ր, աննվաճ բարձո՛ւնք...  
Գազաթի ձյան պես ճերմա՛կ անուրջներ  
Ու երկրային սիրո մեղմագի՛ն հուշեր...

Անտարբերությամբ լցված մի հոգի,  
Առանց մարմնի...  
Անգո՛ւ, անմարմի՛ն, անշո՛ւնչ ու անտե՛ս  
Կյանքի խոր ծովում նավա՛կ կիսավեր...

Սիրտ ու ոչ բաբախ,  
Երգ ու առանց ձայն,  
Հայացք, ոչ՛ աչքեր,  
Հոգի՛ կիսավեր,  
Ու միշտ անտարբե՛ր...  
Ու միշտ անտարբե՛ր...

Զայրույթի ցասո՛ւմ,  
Անվե՛րջ լռությո՛ւն,  
Աստղացած արցու՛նք,  
Աննվաճ բարձո՛ւնք  
Ու հոգի՛ լցված անտարբերությամբ,  
Կիսավեր հոգի, քարացած արցունք...



## Սպասում

Ես սպասում եմ քեզ...

Ուզում եմ պատմել ամե՛ն-ամե՛ն ինչ...

Ինչպես եմ ապրել առանց քեզ, շնչե՛լ,

Ինչպես է հոգիս անվե՛րջ անըջել...

Ինչպես է դարձել լուսինն ինձ ընկեր,

Բազում սևաթույր ու ցուրտ գիշերներ...

Ինչպես եմ հոգնել ու հուսահատվել,

Բայց կրկին անգամ իմ մեջ ու՛ժ գտել...


Ես սպասում եմ քեզ...

Ու գիտե՛մ, կգա՛ս...

Չե՞ որ ուրիշ կերպ լինել չի՛ կարող...

Ես սիրո՛ւմ եմ քեզ, իմ անհա՛ս երազ,

Բայց և իրակա՛ն, բայց և ջերմացնո՛ղ...




4c



## Յուլացիկ հայելին

Իսկ երբևէ փորձե՞լ ես դու հասկանալ քեզ ու չափստալ  
Փորձել գտնել եզրեր քո իսկ երկու տարբեր ղեմքերի մեջ,  
Լայել հայելուն, բայց և այնպես ուրախանալ գտնելով քեզ  
Յուլացուցիչ ու պարզ ղեմքով քո հայելու մեջ...  
Երբ նայում ես իմ աչքերին, խինդ ես գեղում քո՝ աչքերից,  
Իսկ տեսնում ես խինդը այդ մեծ հայելու մեջ քո՝ ցուլաշող...  
Ինչպիսի՞ն է էությունդ այդքա՞ն ծանոթ,  
Որից շուրջդ տարածվում է ահ ու շփոթ...  
Արդ, ո՞վ ես դու, գուցե ասե՛ս, ճիշտ է հայելին արդյոք այդ քո,  
Որում անգայթ ճշմարտության քաղցր ղեմքը  
Դու տեսնում ես բիրտ կեղծիքի արտասուքով դառը ցողված,  
Թե՛ ճիշտ եմ ես, իմ աչքերը,  
Որոնց հայելին քեզ դարձնում է գո կատարյալ,  
Ու սիրում է նրան այդպե՛ս ինքնամոռաց...  
Հու՞ր ես անմար, որ վառվում է, թողնում հետքեր իմ բոբբ հոգում,  
Թե՛ ծուխ ես լոկ՝ հրից հետո, որից չկա ոչ մի օգուտ...  
Գեղածիծաղ ժպիտը քո այդ ինչպե՛ս է՝  
Արտավիժող մի հեղեղ է բարձրից ասես,  
Երբ նայում ես հայելու մեջ իմ աչքերի.  
Իսկ քո հայելին...Ի՞նչ կա այնտեղ,  
Որ չեմ տեսնում ես լիովին...  
Իմ ցուլացիկ ու միամիտ պարզ հայելին...  
Գուցե ինքը՝ հենց հայելին է  
Կամակցում քո կամքին համառ՝  
Նույնացնելով կամքերը ձեր,  
Ու ցույց տալիս մի այլ պատկեր...  
Ես չեմ ուզում լսել կրկին խենթ ձայնը քո տխրաթաթավ,  
Որ ստիպում է ինձ ետ նայել քո հայելու մեջ անսիրտ տակավ...  
Ես ուզում եմ քեզ միշտ տեսնել ի՞մ աչքերի մեջ թարթափուն,  
Որտեղ դու կաս այնքա՞ն բարի, սիրագորով, նաև խոհուն...  
Ու մի՛ կարծիր, որ տարված եմ խաբկանքով լոկ ինքս իմ անձի.  
Ես վստահ եմ, որ երբ լույսը սիրո իմ բոբբ ու մշտաշող  
Հոգին քո ջերմ կթափանցի,  
Դու կդառնաս այնպե՞ս սիրող,  
Որ քո կամքն իսկ ինձ խանգարել էլ չի կարող...  
Ու կճամ հավատարիմ աչքերին ի՞մ ես ցուլացիկ.  
Սիրում եմ քեզ իմ աչքերում,  
Ու նաև քո հայելու մեջ...



## Ինքնախոստովանում...

Ես այդպես էլ չհասկացա՝ քեզ ինչ էր պետք...  
Բազում օրեր լուսացրի հոգիս տանջող մտքիս վրա,  
Ու պատասխանն իմ այդ հարցի հանկա՛րծ գտա...


Այն, ինչ ուզում էիր, շա՛տ էր տարբեր իմ տվածից,  
Ու անպատվար քո խոսքերը ես ի վերջո վերծանեցի...

Ես գիրք էի բազմահատոր,  
Քեզ մի բարակ ու չգրված,  
Մաքուր է՛ջ էր լոկ հարկավոր....

Ես երգ էի աստեղաշող,  
Քեզ անավարտ, կիսատ-պոռտ  
Հարկավոր էր սո՛սկ մի երկտող...  
Ո՛չ երգ, ո՛չ տաղ,  
Ո՛չ էլ հոգու ցնծության դող...

Աստղ էի ես ոսկելույս,  
Որ կցրեր խավարն անգուսպ՝  
Արևելով ուղիղ ստվերոտ.  
Քեզ մո՛թ էր պետք, հոգու կարոտ...

Եվ ի վերջո ես հասկացա՝ ինչ էր պետք քեզ.  
Անզոջության ծեծված խոսքեր...  
Ես գնում եմ... Մնա՛ս բարով...



## ՓՈԻՉ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

Անզղջության կռալի՛ տ խոսքեր, որ չե՛ն ծորում,  
Այլ հորդում են ժայռից թափվող ջրվեժի պես առատահոս...

Անէական փու՛ չ խոստումներ՝ խորախորհուրդ ու աստղաբեկ,  
Որ խոսքեր են սին ու դատարկ, բայց հրաթն՝, բայց հոգնաբե՛կ...

Խաբված հոգի, որ ապրել է սին երազի սին պատրանքով,  
Ամեն անգամ նոր փափագի անհաղթ, մոլի հրապույրով...

Ցնո՛րք հուշեր... Կարո՛տ անհագ, որ մաշում է, տանջում հոգիդ  
Ու խլում է նա քեզանից քո ցնծության վերջին շողը մեռնող հույսի...

Եվ ի վերջո սի փոթորի՛ կ, որից հետո անդորր է խուլ, անէական,  
անմե՛ղ, անգո՛ւ,  
Որին այլ կերպ անվանում ենք կորու՛ստ հոգու...

## Կարոտախտ

Ես հիվանդ եմ, ու ցավը իմ անբուժելի, անդարման է,  
Ո՞վ կարող էր հարկավ կարծել, որ լինելով այսքա՜ն առողջ,  
Դատող, բանող ու լավատես՝

Կվարակվեմ մի օր և ես անբուժելի այն սուր ցավով,

Որ բոլորը սեր են կոչում.

Ես հիվանդ եմ կարոտախտով...

Ու չեմ ուզում ընդունել այն, ինքս իմ ցավին դարման չունեմ,

Անհնձնասեր բույսի նման թույլ եմ տալիս,

Որ այն աճի ու շատանա՜ ու տարածվի՜,

Շատի նման արմատներ տա ու խորանա՜ ու խորանա՜...

Ու ցավում է, բայց ո՛չ ոտքս, ձեռքս, մեջքս,

Ո՛չ գլուխս ու ո՛չ թևքս:

Ցափս այս հոգիս է մորմոքում,

Սիրտս տանջում, սիրտս մաշում:

Կարոտա՜խտ է.

Չեմ հանդգնում տալ անունը ես բարձրաձայն հոգուս ցավի

Ու անգետի նման հիմա ես կարծում եմ, որ այն կանցնի,

Հենց որ չտամ անուն նրան...

Չե՛մ հասկանում, որ նրանից խուսափելով,

Անունը սուկ թաքցնելով,

Չե՛մ բուժվում ես, նու՜յն հիվանդն եմ...

Ու լոկ չունեմ հիվանդատոմս...

Ու այդպիսով նա չի՛ հանգչում,

Այլ պարզապես չի՛ տարածվում այլոց շուրթի՛ն, այլոց մտքո՛ւմ,

Դեռ չե՛ն ասում, որ հիվանդ եմ,

Ու վարակիչ իմ այս ես-ից դեռ չեն փախչում ...

Այնինչ՝ ցափս այս շատանում է

Ու տարածվում հոգուս խորքում,

Ճյուղեր տալիս, կրծում՝ ներսից,

Հյուծո՜ւմ սիրտս, հյուծո՜ւմ հոգիս:

Իսկ մեռնո՞ւմ են արդյոք տեսնես կարոտախտի՜ց....

## Միրում եմ, երբ սիրում ես...

Միրում եմ, երբ սիրում ես ինձ,  
Այնպե՛ս թովիչ, այնպե՛ս դյութիչ,  
Գուրգուրանքով քո սեթևեթ,  
Որ ժպտում է ինձ առհավետ:

Անկարող է հոգին իմ նուրբ  
Դիմակայել քո փոթորկին,  
Թովիչ մեղքի՛ն, բերկրությա՛նը,  
Քո հայացքի՛ն, ինքնությա՛նը,  
Քո աչքերի խորությա՛նը,  
Նրանց անհագ ցանկությա՛նը,  
Որ փափագ է կոչվում այլ կերպ,  
Որ զորեղ է, քան ժայռ ու ծերպ:

Միրում եմ, երբ սիրում ես ինձ,  
Միրում եմ, երբ գերում ես ինձ,  
Միրում եմ, երբ քո հայացքով՝  
Սուր նիզակներ հանդիսացող,  
Տիրու՛մ ես ինձ...





## Տրոհված հոգու ցավը

Հոգիս սաստի՜կ ցավ է ապրում,  
Երբ ես կամա թե ակամա գիտակցում եմ,  
Որ այլևս չկանք էլ մե՛նք...  
Կամ ես, կամ դու ...

Չենք անվանում բազմախորհուրդ երազները  
Մեր երկրային այլևս մե՛ր...  
Կա ի՛մ, կա քո՛ ...  
Դեռ եթե՛ կա...

Ու մեր ճամփան, որ փորձել ենք դարձնել հարթ,  
Մաքրել քարի ց, փոշո՛ւց, ցավի ց,  
Անցնել անհո՞գ ու միասին,  
Վերածեցինք մեկ վայրկյանում երկու նեղիկ մութ կածանի,  
Որ պիտ անցնենք իրարից զատ,  
Թե ես, թե դու ...

Մե՛ր հույսերը, մե՛ր երգերը, մե՛ր հուշերը  
Ծվե՛ն-ծվե՛ն եղան հանկարծ,  
Ու փորձեցինք տարանջատե՛լ...  
Ու ի՛նչ պարզվեց...

Մենք փորձել ենք մեկ ամբողջից  
Ստանալ երկու անհատ ամբողջ...  
Անհնա՞ր է... Թերևս կե՛ս...



## Հոգեխանգարմունք

Լուսայգն է բացվել  
Ամեն օրվա պես,  
Ու թռչուններն են երգում անհագուրդ,  
Ամեն ինչ նույնն է,  
Խաղաղ է կարծես,  
Բայց ես ապրում եմ հոգեխանգարմունք:

Վիճակս, հարկավ, ծանր է ու շատ բարդ,  
Խանգարված հոգին ի՞նչ պիտի լինի:  
Ինքդ էլ գիտես՝ ոչ մա ըդ եմ, ոչ սա ըդ,  
Պարզապես ոգի մի առաքինի~:

Վաղվա գալիքի, սիրո բերկրանքի  
Մտահոգումը կրծում է հոգիս,  
Ու դու անադմու~կ, ու դու վշտա~լի,  
Հեռանում ես դու, թողնում մենակ ինձ:

Հոգեխանգարմունք, որի բարդության աստիճանները  
Որոշում է իմ՝ պատից կախված հին ժամացույցը՝  
Հաշվելով չափ-չափ այն բռպետները,  
Որոնք հետզհետե հեռացնում են քեզ  
Իմ խելակորո~յս, խանգարվա~ծ ես-ից:

Ինձ բժիշկ պետք չէ՝,  
Քանզի տառապում եմ ես  
Անբուժելի մի հիվանդությամբ՝  
Հոգու ու մտքի անհավասարակշիռ  
Վա~ռ մոլեգնությամբ:

Բայց սպասի՛ր, ինչպե՞ս կարող է խանգարվել  
Մի բան, որը ես չունեմ:  
Չունե՛մ ես հոգի, ու չունե՛մ ես սիրտ,  
Դու ես ինձ ասում<<Չա՛ր, կոպի՛տ ու բի՛րտ>>:  
Իսկ թե այդպես է՛ի՞նչ անե~ծք, աղոթ~ք,  
Չի՛ կարող լինել հոգեխանգարմունք:

Հոգեանդորր է, բութ, բայց հատու,  
Կորուստ է երգի, վերքի ու հոգու...

## Միրո անգույն նկարը

Եղավ հենց այնպես, ինչպես կարծում էի:  
Միրոսը նավը լքեց իմ օվկիանի ափերն ալեկոծված  
Ու նախընտրեց իր խարիսխը ձգել հանդարտ ծովի մեջ,  
Ուր հանգիստ է ապրել, անհո՞գ, ինքնամոռա՞ց:

Եղավ այն, ինչ պիտի՝...Ես վաղու՞ց գիտեի,  
Որ քո սիրո նկարն զու՞րկ է ամեն գույնից,  
Կորցրել է արդեն երանգ, իմաստ ու փայլ,  
Ու չի՝ ձգտում այրվել սիրուս անհուն բովից:

Մինչդեռ ես՝ հիմարս, հոգուս անհու՞ն խորքում,  
Հույս էի փայփայում, որ կգնեմ նոր ներկ,  
Որ կգնեմ գույներ մեր համատեղ սիրո  
Վա՞ռ նկարի համար...  
Ու կներկե՛մ նրան ես անխնա՞ կարմիր  
Միրո գույնով այնքա՞ն ջերմ ու այնքա՞ն հարիիր...

Բայց ի՞նչ կարմիր, նույնիսկ դեղինը չես ուզում,  
Սև է ու լոկ սպիտակ կյանքդ, այնքա՞ն անգույն...  
Միրո պատին մեր մեծ այդպես էլ չստացանք  
Պատկե՛րը մեր սիրո՝ անձայն, անարձագանք...

Ու քո նավը դժգոհ իմ ափերը լքեց,  
Գնա՞ց ու խու՞լ մի տեղ մենակ նա կայանեց...


## Նորից առանց քեզ

Տակավին չեկած՝ գնում ես կրկին,  
Ու ես ոչ մի բառ չեմ կարող ասել:  
Դժվար է խոսել բաժանման պահին,  
Կփորձեմ քեզնից վա՜ն հուշեր պահել:

Գիտե՛մ՝ թողնում ես սիրտդ դու այստեղ,  
Ու պիտի գնա՛ս հավերժի ճամփով,  
Գիտե՛մ, որ հոգիդ փոթորկում է դեռ,  
Չի կարող ապրել անհո՜գ, անվրդո՜վ:

Թո՛ղ Աստված օրհնի՛ քո բռնած ճամփան,  
Ոտքդ թո՛ղ քարին երբե՛ք չդիպչի,  
Ուր էլ որ գնաս, դու իմ անբաժա՛ն,  
Գիտցիր՝ քեզ երբեք չեմ դավաճանի:

Ու եթե հանկարծ մենակ քեզ զգաս,  
Ու եթե ուզես, այնժամ ետ արի...  
Ես քեզ կսպասեմ դեռ հարյու՜ր տարի...



## Ա՜խ, ոնց էինք սիրում...

Այնպե՛ս էիր սիրում,  
Ա՜խ, ո՛նց էիր սիրում,  
Թվում էր՝ լուսայգն ինձ համար է բացվում,  
Հավքերն երա՛մ-երա՛մ ինձ համար են երգում,  
Այդպե՛ս էիր սիրում:

Այնքա՛ն էի սիրում,  
Ա՜խ, ոնց էի սիրում՝  
Պատրաստ էի վառել բոլոր, կաթիլները իմ սպասումի մոմի,  
Ու գիտեի՝ կաս դու, իմ հոգու մ ես, իմ մե՛ջ,  
Բորբ լուսնյակի լույսով, սիրով անմա՛ր, անշե՛ջ:

Ի՞նչ պատահեց հանկարծ, ինչո՞ւ մեռա՛վ, գնաց:  
Սերն իմ ինչո՞ւ հանգավ,  
Գոնե դու իմացա՛ր...

Երգը քո չեմ հիշում,  
Ո՛չ բառ, ո՛չ եղանակ,  
Բայց դեռ հնչում է այն սրտիս խորի՛ն խորքում:

Այսքա՞ն էիր սիրում, ների՛ր, քի՛չ էր, ների՛ր,  
Այսպես չէի ուզում, ուզում էի գայիր  
Հավերժ զարուհների նման,  
Դալար տերևների նման,  
Հեռվում թույլ նշմարվող, բայց ամեն քայլի հետ  
Բորբոք լույսի նման...  
Ուզում էի մսալ քո երազի փերի՛ն,  
Այնպե՛ս սիրել հոգիդ, այն դարձնել գերի...

Ինչո՞ւ այսպես եղավ,  
Դու հասկացա՞ր գոնե:  
Ինչո՞ւ սերը մարեց,  
Ինչո՞ւ այսքա՛ն ցավ է:

Իմ լա՛վ ընկեր, բարի,  
Բարի, բայց ոչ սիրելի,  
Ցավո՞ք՝ արդեն ոչ է լինել սիրո գերի,  
Կամորջներն են այրված, ճամփա չունենք դարձի,  
Թող քո հոգին անեղծ ինձ՝ հիմարի՛ս, ների:

## Լռության խորհուրդը

Ինձ ավելորդ հարցեր մի՛ տուր,  
Ես չե՛մ ուզում փնտրել բառեր,  
Որոնց ուղիղ իմաստի մեջ  
Չե՛ս գտնի այն, ինչ ուզում ես լսել ինձնից:

Ես սիրում եմ, երբ լռում ենք,  
Ու լռում ենք այնպե՛ս խորին,  
Որ ավելին է մեզ ասում,  
Քան կլսենք մե՛ր իսկ բերանով  
Մե՛զ իսկ ասված բառախմբից:

Արի՜ սպասենք մթնշաղի՜ն:  
Ասում են, թե երբ լուսինը  
Իր շողերն է մեզ նվիրում,  
Մենք դառնում ենք մելամաղձո՜տ,  
Սենտիմենտալ ու ռոմանտիկ....

Ու կնայենք իրար երկա՜ր,  
Բայց չե՛նք խոսի, ես չե՛մ ուզում...  
Այն, ինչ դու ինձ ասե՛ս պիտի  
Առանց ձայն էլ եմ ես լսում:


Ես ուզում եմ նայել խորի՜ն,  
Խորաթափանց աչքերիդ մեջ,  
Ու ընթերցե՛լ, քեզ ընթերցե՛լ,  
Ու խորհուրդը հասկանալ քո՛,  
Ու հասկանալ, թե ով ես դո՛ւ  
Թեկու՛զ և հենց գուտ իմ կյանքում,  
Ինչ ես ուզում, որ չե՛մ տալիս,  
Ինչն է սիրտդ այդպես հուզո՛ւմ...



Ես վստահ եմ, որ մեր անանց լուրջունից,

Մի ամբողջ վեպ դեռ կձևվի՝  
Որ կկարդան բազում մարդիկ,  
Որ կդառնա խորհու՛րդ կյանքի:

Ուրեժն՝ ե՛կ լռենք այսօր,  
Ու հավատա՛ մեր այդ քայլով  
Սկի՛զբ ենք դնում մի նոր գործի,  
Մի նոր գրքի՛ բազմահատոր,  
Ուր չենք գրի ես կամ էլ դու,  
Մե՛նք կգրենք մեր լուրջա՛մբ,  
Ծովածավա՛լ համբերությամբ:  
Ա՛յն լուրջամբ, որ իր խոսուն,  
Իմաստալից իր գոյությամբ  
Պահպանում է սե՛րը մեր մեջ,  
Դարձնում սիրո՞ղ ու սիրատե՛նչ...  
Ուրեժն՝ ե՛կ լռենք այսօր...





## Հիշողության ձայնը

Հիշի՛ր ինձ ծանոթ, իմ լա՛վ մեղեդի,  
Նվագի՛ր հոգուս լարերի վրա,  
Կյանքիս վառ գարնան հուշերով լցված՝  
Դու չմոռանա՞ս անունը նրա:

Նրա բացական ես չե՛մ հանդուրժի  
Ձայնիդ կարկառուն գեղգեղանքի մեջ,  
Լցրու՛ քո ամեն հնչյունը բարի  
Նրա աչքերի հրո՛վ դու անշեջ:

Ու հնչի՛ր երկար, հնչի՛ր կարոտով,  
Գուցե կլսի՞ մեղեդին ծանոթ,  
Հոգու սառույցը գուցե կհալչի՞,  
Ու դարձյալ կգա իմ սերը ինձ մոտ:

Հնչի՛ր ինձ ծանոթ, իմ բարի՛, իմ լա՛վ,  
Նվագի՛ր սրտիս սիմերի վրա,  
Երազկոտ աշնան թախիծով անհուն,  
Հավերժ հնչեցրու՛ անունը նրա:

Չե՞ որ դու գիտես, որ ամբողջ կյանքում  
Ես՝ ու դու ինձ հետ, սիրում ենք նրա՞ն:

## Հրաշք...

Գիտե՛մ, թանկս, էլ չե՛ս գալու,  
    Էլ չե՛ս լալու ու խնդալու,  
    Չե՛ս ասելու, որ հրաշք եմ,  
Որ քո կյանքում ես միակն եմ:

    Էլ չե՛ս լսի հոգուս երգը,  
    Չե՛ս ամոքի սրտիս վերքը,  
    Չե՛ս ժպտալու, նախատելու,  
    Ինձ տեսնելիս՝ երկյուղելու:

    Էլ չե՛ս գալու, ո՞նց չես գալու,  
Ո՞նց ես առանց ինձ ապրելու,  
    Հոգուդ լույսը չե՛ս մարելու,  
Սիրելու՛ ես ինձ, սիրելու՛...

    Սիրելու ես կյանքիցդ շատ,  
Այնպես քնքուշ ու անարատ,  
    Խենթ քո հոգին բացելու ես,  
    Թներ առած՝ ճախրելու ես:

    Գաս ու հասնես քեզ սպասողի՛ն,  
    Քեզ սիրողի՛ն, երագողի՛ն,  
    Գաս ու տեսնես՝ ինչպես տրտում,  
Թախծոտ նստած՝ քեզ է սպասում:


## Չասվա՞ծը թանկ է ավելի....

Աստվածունի էի ես  
Քո սիրո վե՛մ տաճարում,  
Ու հիմա հասարակ մի մարդ  
Այս մե՛ծ ու այս բի՛րտ աշխարհում:

Երկնային նեկտար էի ըմպում  
Քո սիրո լայնաշուրթ գավաթից,  
Իսկ հիմա ո՛չ լալիս , ո՛չ խնդում,  
Ո՛չ ապրում, ո՛չ չքվում այս կյանքից:

Կոտրված սրտի ձայն է հնչում  
Խո՞րթ հնչում իմ փխրուն ականջին,  
Սիրաշունչ իմ հոգի՛ն է ցավում,  
Փոթորկում, խռովում մոլեգին:

Ու հիմա նախընտրում եմ լռել,  
Ու կասե՛մ, թե ինչու, սիրելի՛ս...  
Վաղուց է արդեն, ինչ գիտեմ,  
Չասվածը թա՛նկ է ավելի...



## Միրո տնակը


Ամեն ինչ սկսվեց, երբ դու թակեցիր դուռը տնակի,  
Այն փոքրիկ, հեռավոր տնակի, որին այլ կերպ սիրտ են  
անվանում

Ու որ տեղադրված է այն կալվածքներում, որ կոչվում է մարմին...

Թակեցիր, ու ես բացեցի իսկույն...  
Ի՞նչ իմանայի՝ ներս չէի՝ր գալու...  
Ի՞նչ իմանայի, որ մի մոլորված ճամփորդ էիր լոկ,  
Որ ցանկանում էր իր ուղի՛ն գտնել...

Ու դու հեռացա՜ր...  
Գնացիր հանգիստ քո արահետով,  
Որ տանում էր քեզ դեպ անհայտություն:  
Ու դու հեռացար՝ թողնելով բաց դուռն այն տնակի,  
Որ սիրտ են անվանում այլ կերպ...

Միրոն իմ փոխարկվեց, դարձավ մի փարոս,  
Որ լուսավորեր քեզ նախատեսված արահետը այն,  
Որ լայն ճանապա՛րհ դեռ պիտի դառնար,  
Ու որով պիտի հաստա՛տ քայլերի՝  
Առանց գեթ մե՛կ անգամ ետ նայելու,  
Առանց փնտրելու ու նկատելու փարո՛սը այն մեծ,  
Որ լույս էր տալիս, արձակում էր լույս կածանիդ վրա  
Այն նեղ, խորութո՛թ,  
Որով դու պիտի հաստատ քայլեի՜ր...





## Անենթակա...

Մեր սերը նման է մի պարզ նախադասության,

Որ ո՛չ պարագա, ո՛չ խնդիր ունի,

Ու ո՛չ նպատակ, ո՛չ տեղ, ո՛չ հանգում,

Ու ո՛չ ժամանակ, ու ո՛չ մատուցում,

Այլ ընդամենը պարզ ու համառոտ

Ունի նա իր մեջ երկու երկյուղո՞ւտ

Ու բայց կարևո՛ր, գլխավո՛ր անդամ՝

Ենթակա, ստորոգյալ...

Բայց հիմա, երբ դու արդեն կողքիս չես,

Ու միտքը այդ պարզ անդեմ է դարձել,

Այնքա՞ն հարցեր կան՝ ուղի՛ղ, անուղղակի՛,

Տե՛ղ, պատճա՛ռ ու ձև՛, կամ էլ եռակի

Նույնանդամների շարան կա ասես,

Որ ուզում են գտնել իրենց տեղը մեր

Այդ պարզ համառոտ նախադասության մեջ՝

Վերածելով այն ճո՞խ ընդարձակի...

Չեմ ուզում, բա՛վ է, հարկավոր չի՛ դա,

Ավելի լավ է իմ ստորոգյալը հավե՛տ թող մնա

Անենթակա...

## Գնում ես...

Գնում ես..

Ու անբարբառ մանուկի պես ոչինչ չունեմ քեզ ասելու...

Մինչդեռ այնքա՜ն խրթին մտքեր, այնքա՜ն հարցեր կան իմ մտքում,

Որ չե՛ն գտել իրենց տե՛ղն ու իրենց դե՛րը քո աշխարհում...

Է՜հ, ինչ ասեմ... Դու լավ եղի՛ր...

Ապրի՛ր ուրախ, անհո՜գ կյանքով:

Ես վստահ եմ, դու կարո՞ղ ես...

Իսկ ե՞ս, ես ի՞նչ, ես էլ չկա՜մ,

Ես առանց քե՞զ, ես ոչի՜նչ եմ:

Ես առանց քեզ վերածվում եմ սին մարմնի,

Որի հոգին ի՛ր իսկ մարմնից խիստ խռոված՝

Լքում է, ու հեռանալով՝ թափառում է այս աշխարհում,

Ու չգիտեմ՝ ետ կգա՞ նա...

Դու տանում ես նրան քեզ հետ՝

Ինձ թողնելով ֆիզիկական զո՜ւտ գոյություն...

Բայց ի՞նչ ասեմ: Ես կփորձե՛մ...

Ես կփորձե՛մ բավարարվել լոկ նրանո՞վ, ինչ ե՛ս ունեմ...

Ֆիզիկական ի՞մ գոյությա՜մբ...

Գուցե սիրե՛մ: Մեկ ուրիշի՜ն:

Դու երևի դեռ չգիտես, որ սիրում են միայն կրկի՛ն...

Նորից սիրել անհնա՜ր է...

Ասել է թե՛ նույն մարմնում մե՛կ այլ հոգի բնագավի՛ր...

Անհնա՜ր է...

Այդ հոգի՛ն է, որ կարող է բազում-բազում կյանքեր ապրել՝

Ստանալով տարբեր մարմին...

Այ դու, ախ՜ դու, դու կսիրես...

Իմ հոգին էլ քեզ հետ տարած ու....

Լավ կապրես, ես վստահ եմ...

Դու ուժեղ ես, դու կարող ես...

Իսկ ե՞ս: Ես ի՞նչ, ես էլ չկամ,

Ես առանց ինձ ինչպե՞ս ապրեմ:

Երբ իմ ամբողջ էությունը լցրել էի լո՜կ քեզանով,

Որտեղ հիմա, քեզնից հետո կա լո՜կ մի բան...


Դատարկություն...


Ու ցավո՜ւտ է...

Զարմանում եմ, թե ինչի՞ց է, որ ոչինչը ցավ է տալիս...

Ի՜նչ էլ ասեմ, ի՜նչ էլ անեմ,

Որոշել ես ու գնում ես...  
 Ու չե՛մ փորձի ցանկանալ քեզ ես բարի բախտ,  
 Շա՛տ մանուկներ ու անսահմա՛ն, հրա՛շք մի սեր...  
 Կուզենայի, բայց չեմ կարող...  
 Ու ների՛ր ինձ իմ այս դառը, բայց և անկեղծ ասելիքս...  
 Դու գնում ես...  
 Գնա՛ս բարով...





## Սիրուց ատելություն՝ մեկ քայլ...

Ես սիրում եմ քեզ ու ատում անվերջ,  
Ու չեմ հասկանում կյանքը սրտատենչ,  
Թաղվել եմ ասես այս մտքերի մեջ,  
Ատում եմ ես քեզ ու սիրում անվերջ:

Դրսում անձրեն է կամացուկ հորդում,  
Իսկ ներսում սրտիս սիւներն են երգում,  
Օրվա խորհուրդը թախիժ է բերում,  
Ես ատում եմ քեզ անվերջ ու սիրում...

## Ես ընտրում եմ գերությունը

Քո մի խոսքը՝ ասված սիրով, կյանք ու լույս է ինձ ընծայում,  
Հրեշտակի թևեր տալիս ու դարձնում երկրիս վրա՝ երկնային...

Բարձրացնում ամպերն ի վեր, երկնքին է ինձ հասցնում,  
Եղեմական քո դրախտում կյանք պարգևում անրջային...  
Իսկ մի խոսքդ՝ հրատոչոր, ասված կոպիտ, նաև խոտոր,  
Բարձրությունից ինձ ցած նետում, տրորում է հոգիս փխրուն,  
Հասցնում հարված մի լիաթույն...

Ու տեսնելով հայացքը ես հրաբոսոր քո աչքերի,  
Որ նայում են այնպե՛ս գութով, հմայում ինձ, դարձնում գերի,  
Հասկանում եմ, որ քեզնով եմ ապրում սիրված ու անթերի...

Քո աչքերն են միայն սիրում այնպե՛ս քնքուշ ու բոցակեզ,  
Քո աչքերն են իրենց լույսով դարձնում ուրախ կամ վշտակեզ,

Նրանցով եմ ես հարագո,

Ու նրանցով նաև անգո...

Երբ գնում ես, տանում հոգիս,

Սակայն չանցած գեթ ակնթարթ,

Կրկին գալիս՝ հոգի տալու,

Դարձնելու կյանքս դրախտ,

Ես չգիտեմ՝ ինչպես անեմ, որ խուսափեմ քեզ նայելուց,

Հրատոչոր քո հայացքին հանդիպելուց,

Ու քաղցրահունչ, բայց և նաև բիրտ խոսքերդ ընկալելուց,

Քանզի գիտեմ, որ, տեսնելիս թախճավսեմ աչքերը քո,  
Կանխագգում եմ հպարտությանս վախճանը մեծ ես կանխավաղ,

Ու երագները խանդակաթ

կրկին անգամ լույս են վառում սրտում իմ պաղ:

Ինչպես վարվեմ, ինքդ ասա,

Գեթ մեկ անգամ լուսաբանիր,  
Ինչպես ցրվեմ ու ազատվեմ  
Գերությունից քո աչքերի կորովաբիր...  
Ի՞նչ...հեռանամ... Ես փորձել եմ՝  
Զուր ճգնելով ու սփոփելով ինքս իմ հոգին, վեհությունը,  
Սնել անմիտ, վառ հույսերով իմ թուլական էությունը,  
Այն, որ հայարտ ման է գալիս, ու խոնարհվում լոկ քո առաջ,  
Այն, որ բուք է մի հողմահույզ, ու հենց միայն քո ավերին  
Դառնում հովիկ թեթևասույր, օգնում ծովում՝ քո նավերին...  
Ու հողմածեծ հրի նման ճարճատում է այնպես արագ,  
Ու միայն քո սեղանին է գիրք կարդալիս դառնում ճրագ:  
Մի բան ասա... Դու լռում ես..  
..Ու ես կրկին սրտապնդված՝  
Քայլում եմ նույն ճանապարհով՝  
Միշտ դեպի քեզ, կամ քեզանից...  
Այսպես է միշտ... Քանի՜ տարի  
Չեմ հանդգնում հանդիմանել արարքները քո բասրելի...  
Գուցե գնամ... Ընդմիշտ գնամ  
Ու ազատվեմ կայսրությունից քո հոռեգույն.  
Բավ է հոգիս, զու՜ր մի ջանա.  
Ես ընտրում եմ գերությունը...

## Իմ հորինածը

Փվկեց սիրո տունն իմ, դու ինձ չէիր սիրում,  
Եվ ես հասկանում եմ, որ վաղո՜ւց արդեն  
Կորցրել եմ քեզ ճերմակափրփուր իմ երազներում,  
Անհագ վճռականության ու ծածուկ խոհերիս լափրիկնթոսում:  
Քեզ փնտրում եմ ամենուրեք, բայց գտնում եմ լոկ իմ սրտում:  
Եվ պատում է հոգիս անհագ մի տենդագին հուսալքում:

Ինքս ինձ ծածկում եմ անհասանելի սառույցի շերտով,  
Ու ստում եմ ես ինձ այնքա՜ն ճշմարտանման,  
Որ ի վերջո մխիթարվում եմ իմ իսկ հորինածով:

Իսկ որքա՜ն եմ ուզել հիմքել մատուռ սիրո,  
Վառել սիրո մոմեր, ծխա՜լ սիրո համար,  
Ու ի՞նչ ստացվեց, գիտե՞ս, ուխտագնաց դարձա,  
Թափառեցի երկար անապատում մենակ  
Եվ ի վերջո կրկին քեզ մոտ վերադարձա...

Քո աշխարհում, իմ սեր, ես մնացի անտուն,  
Եվ հենց այստեղ էր, որ արձագանքն իմ հոգու  
Մեկ առ մեկ իմ մտքերն ու բառերն էր կրկնում,  
Իսկ կարոտը սրտիս սին պատրանք էր ծնում:

Եվ քո սիրո դարում իմ անտուն մնալուց  
Ստեղծվեց երևակայության հսկայական ջերմոց,  
Ուր, չգիտես ինչու, ամեն մի անկյունում  
Տիրում էր տրորված ծաղկի հոտով արբեցած լռություն:



Ու քայլում եմ ահա սիրակորույս ու լուռ  
Իրիկնային մթին անգույն փողոցներում,  
Ուր մտքերն իմ արդեն հուսալքվա՞ծ, տրտում,  
Քամու լուսաշող շիթերի քմահաճույքին եմ հանձնում...

Երջանկության ու տառապանքի անորոշ մի զգացում...  
Հետո դատարկություն՝ անցավ, անհույս, անլաց...  
Շնչարգելության կատաղի բռնկում,  
Եվ կրկին իմ սրտում ունայնություն անանց...

Աճող կարոտին իմ անձնատուր ես եղա,  
Քեզ փնտրեցի երկա՞ր, էլ երբե՞ք չգտա...

## Իմ անսիրտ հեռախոսը

Գիտեմ, դու էլ չես գա, դու հեռացար ընդմիշտ,  
Եվ իզուր եմ ջանում ինքս ինձ համոզել,  
Որ չես լքի նավը սիրո դու բաց ծովում...  
Ուշ է արդեն ասել շանթաշոհնդ խոսքեր  
Ու հավատալ, որ կբացվի արև մեր սրտերին:  
Էլ չեմ բացի հոգիս կույր դիպվածի առաջ,  
Չեմ երազի նույնիսկ, որ ներս կգաս հանկարծ,  
Ու աչքերում քո վառ, այնքա՜ն պարզ մեղրագույն  
Կնշմարվի մասունք սիրո՝ պեղված մեր անցյալի բեկորներում...

Վաղու՜ց արդեն դեմքը քո խրախասեր  
Էլ չի ժպտացել ինձ ու չի ասել ոչինչ,  
Փութահորդոր թախիծ ու փութանցիկ մի լաց,  
Վերջին ասված մի բառ հրաժեշտից առաջ.  
Ուրիշ ոչինչ...ոչինչ...

Ու քամին է միայն մերթ ընդ մերթ հիշեցնում  
Զբոսանքները վայրի, բայց այնքա՜ն սիրակեզ  
Ծաղկած դափնեվարդերի հրաշք ծառուղիում,  
Այն նույն քամին, որ խենթ, սիրակարոտ ու բորբ  
Մեզ՝ երկուսիս համար վալս էր միշտ նվագում...  
Ու պարում էինք մենք ու սիրուց խենթանում,  
Ու ստիպում էր նա մեզ լողալ սիրո ծովում:

Զուր եմ փորձում պարզել մտքերն իմ հին ու նոր,  
Մտքեր, որ եռում են մեջս կարասի նոր գինու նման,  
Որքան էլ արբենամ իմ սին երագներով,  
Իրականության սթափությունը սպանում է երևակայության  
պոեզիան...

Ու փորձում եմ կառչել հույսիս շողից վերջին,  
Որն ուղղակիորեն կապել եմ իմ հեռախոսալարին  
Ու, նստելով կողքին, գրկում եմ ես նրան՝  
Հեռախոսը իմ հին, սպասում սիրածարավ...  
Ուզում եմ ես լսել ձայնդ կրկին՝ թեկուզ վերջին անգամ.  
Դու չես գանգում, չկաս, ու ես հասկանում եմ,  
Թե որքա՞ն է անսիրտ հեռախոսը իմ հին...

Չէ, դու չես գա, գիտեմ, ու ես որոշում եմ,  
Որ պիտ կազմակերպեմ հրավառություն մեծ ի փառս մեր  
բաժանման,  
Եվ այդժամ հայտնեմ ի լուր այս աշխարհին,  
Որ ես մեկ անավարտ ողբերգություն  
Բռնեց ասպարեզը կյանքի՝ իջնելով վեհ բեմից...

## Մենություն

Ասացիր ի վերջո ամեն ինչ անկեղծ  
Առանց ետ շրջվելու հեռացար,  
Հպանցիկ մի հայացք գնալուց առաջ,  
Ու այնպես մոլագար դու անցար...

Իմ հոգու անհատակ զգրոցում  
Թողեցիր մեր սիրուց լոկ հուշեր,  
Ու հիմա ես մենակ ու տրտում  
Փնտրում եմ իմ սիրուց փշուրներ...

Եվ սիրուս անհատակ մեծ ծովից  
Ըմպեցիր կաթիլ առ կաթիլ,  
Իսկ հետո բաժակ առ բաժակ  
Ու ժապ ծովը իմ անկաթիլ...

Հենց այդպես ցամաքեց ծովը իմ,  
Որ միայն քեզ համար էր ծփում,  
Ու արդեն հենց հաջորդ՝ նոր ծեգին  
Ինքն իր մեջ իր մոլուցքն էր թափում...

Քեզ պատեց խնդություն մի վարար՝  
Հագեցած ծարավից քո ահեղ,  
Ինձ ժապ խենթություն մոլագար,  
Որոնող հոգի մի անմեղ...

Իմ ծովի հակինթ ջրերում  
Դու լողալ երբեք էլ չիմացար,  
Ըմպեցիր մինչև վերջ, ու հետո  
Հեռացար հայացքով շանթահար...

Քո խանդից մոլագար բեկբեկվեց,  
Փշրվեց հոգիս ցավագին,  
Չիմացար, որ այդպես չեն սիրում,  
Ցասումով այդքա՞ն տենդագին...

Սիրո տենդը այլևս չկա,  
Տեղի է տվել թմրության,  
Երբ ուժեղ ցավից ակամա,  
Դառնում ես գերին անտարբերության...

Հենց այսպես ձեռնունայն ու տխուր  
Մենությանն ընկեր ես դարձա,  
Փայփայեցի հույսեր շա՛տ իզուր,  
Ու վերջում միայն հասկացա.

Որ երբեք չենք լինի միասին,  
Սոխակները էլ չեն գեղգեղա,  
Չեն պատմի իրենց սերը վարդին,  
Մեզ համար արևն էլ չի շողա...

## Յուրօրինակ է...

Այս աշխարհում տարօրինակ է ամեն ինչ,

Նույնիսկ քո սերը յուրօրինակ է,

Ու չի կրկնվում աշխարհում ոչինչ,

Ամեն մարմնում մի նոր էակ է:

Ու գիտես՝ լավ է, որ դու միակն ես,

Դու ի՛նձ համար ես, կարոտի՛ս վերհուշ,

Անկրկնելի ու խորահատակ ես,

Ինչպես օվկիանոսներն ու երկի՛նքը լուրթ...

Միբու՛մ եմ ես քեզ, ու սերն իմ անա՛փ,

Նույնքա՛ն ինքնատիպ ու յուրօրինակ է,

Առանց քեզ կյանքս տխո՛ւր է անչափ,

Այս ամենն, հարկա՛վ, տարօրինակ է...


## Ի՛մ կատարելություն

Կատարելություն, ասում են, չկա, ու չի էլ եղել,  
Ապա ինչպե՞ս է, որ դու ապրում ես այս մեծ աշխարհում,  
Ու վեհությունդ չափելով՝ կրկին ես հասկանում եմ,  
Որ քե՛զ են ուղղված հոգուս բառերը ու սերս անեղծ...  
Անհանդուրժելի հանդուրժողականությամբ քո վե՛հ էության  
Հարթում ես ճամփիդ ամեն խորությունն ու առաջ քայլում,  
Հաստա՛տ քայլերով մխրճվում հոգուս խորքերն անսահման,  
Ստիպում հասկանալ, թե որքա՛ն շատ եմ քեզ հիմա սիրում:

Դու՝ իմ կատարյալ կատարելություն,  
Բա՛րձր բարձրություն, հրա՛ջք իմ լուսե,  
Քաղցրալուր ձայնդ լսում եմ հեռվից,  
Ու փափագում եմ, որ այն չկասե,  
Թող հնչի՛ հավերժ այն զերթ մեղեդի,  
Սիրային սիրե՛րզ իմ հոգու համար:  
Թո՛ղ հավերժանան ակնթարթները  
Մեր սիրո՛ վսեմ, անթի՛վ, անհամա՛ր...

Գոցեմ աչքերս ու լոկ քե՛զ տեսնեմ  
Ու թե աշխարհում պիտ սիրեմ մեկին,  
Մենակ քե՛զ սիրեմ, իմ թա՛նկ, իմ միա՛կ  
Միայն քեզ տենչամ այնպե՛ս մոլեգին:

Դու՝ իմ կատարյալ կատարելություն,  
Բա՛րձր բարձրություն, իմ վե՛հ վեհություն:





## Կյանքիս սցենարիստը

Չգիտեմ ինչու՝ հենց այդպես եղավ:  
Հանձնվեցի քեզ իմ ողջ էությունս,  
Ինչպես լույս մի էջ՝ մաքուր, անապակ,  
Հարթ ու չգրված: Ու թույլ տվեցի,  
Որ ինքդ գրես այդ էջի վրա՝  
Ինքս չդնելով ստորակետ անգամ,  
Չուղղելով ոչ մի սխալ, բացթողում,  
Ու նվիրվեցի անհուն, անսահման:

Գրեցիր այնտեղ, սևագրեցիր,  
Կրկին ու կրկին փորձելով շտկել  
Քո իսկ սխալներն բյուրավոր անգամ:  
Հաճախ ջնջելով, վերափոխելով  
Չէիր հասկանում, որ ամեն անգամ  
Գրչիդ հարվածով ցավ են պատճառում  
Էջին այն մաքուր, որ քոնն էր հիմա,  
Ավելի հաճախ նյարդերիդ բուռն լարվածության մեջ  
Ճմրթելով այն ու դեն նետելով...

Հետո, երբ հանկարծ մտքում քո լուսն  
Փայլատակում էր տեղի ունենում,  
Փնտրում ու գտնում տանջված հոգիս,  
Որ քեզ հանձնած էր սոսկ թղթի տեսքով,  
Ու գրում նորից, ուղղումներ անում քո այն սցենարում,  
Ուր ակամայից ես էի խաղում դերը գլխավոր:

Ստացվեց ի վերջո չստացված մի կյանք,  
Ապրելու փորձեր ըստ քո սցենարի,  
Ու ներկայացում, որ պիտի լիներ,  
Ու դերը գլխավոր պիտի խաղայի...

Պատրաստեցիր քո ամբողջ կյանքում  
Բենեֆիսը քո, ու չիմանալով՝  
Փորձերիդ շարքում դու բաց թողեցիր  
Ներկայացումդ... Կյանքիս սցենարիստ...



## ԱՏՈՒՄ ԵՄ ՍՈՒՏԸ

Ատո՛ւմ եմ սուտը, որ սկիզբ է առնում ճղճիմ խոսքերից  
անհասկանալի,

ՈՒ դառնում է լու՛յս, դառնում մի հեքիա՛թ, դառնում ե՛րգ սիրո  
Այնքա՛ն դյութալի....

ՈՒ հետո հանկարծ, երբ հասկանում ես, որ բնավ էլ չե՛ր այն,  
ինչ գիտեիր,

ՈՒգում ես ճշա՛լ, գոռա՛լ, հեկեկա՛լ, որ դու այդ պահին մեռնել  
կուզեիր...

Կուզեիր փախչել հեռու՛, հեռանալ նրա ո՛չ ճշտից,  
ստից տաղտկալի,

Բայց հետո մի պահ, կրկին լսելով հնչյունները այդ երգի դյութալի՝  
Կուզեիր կրկին ականջդ շոյեր մեղեդի՛ն հանդարտ,  
Այնքա՛ն բաղձալի,

Թեկու՛գ և գիտես, որ սթափ լինելիս սուտը միշտ սու՛տ է,  
ու մի՛շտ նողկալի...

## Հրաժեշտից առաջ

Հիշում եմ՝ ինչպես նայեցիր դու ինձ գնալուց առաջ,

Այնպես մոլեգին, ցասումով մոլի

Ու փոքր-ինչ նաև արհամարհված:

Երկա՛ր սպասեցի դոների միջև՝

Ջանալով որսալ ես մեկ հայացք

Ու հասկանալով՝ ինչու՞մս է բանը:

Սակայն շատ երկար սպասել հարկ չեղավ,

Քո խոսուն հայացքն ասաց ամեն ինչ,

Ու արհամարհված արհամարհանքդ

Խոսեց բարձրաձայն, հատու, բայց հակիրճ:

Քաղցրալուր ձայնդ այլևս չկար:

Աղբե՛կ հայացք, կցկտո՛ւր խոսքեր,

Միշտ էլ այդպես է հրաժեշտից առաջ,

Բառե՛ր անտարբեր, հայա՛ցք կարեվեր:

Հոգնաբեկ դեմքդ ժապ հուշերում,

Ու քո լռության խորհուրդը վսեմ,

Խրթնիմաստ հայացք՝ դոների միջև,

Ու հեռացումիդ քայլերը սիսսիմ:

Հպարտ լինելու իմ մեծ մղումից

Ջրկեցի ես ինձ քեզ ետ կանչելու

Անհա՛գ ցանկությամբ,

Բայց ուշ է արդեն. դու հեռանում ես

Հոգիդ տվայտող վառ մոլեգնությամբ:

Քեզ չե՛մ մոռանա, ու պատկե՛րը քո

Միքուս մատուռում միշտ վա՛ճ կմնա:

## Իմ միակը...

Իմ միա՛կը, իմ անգի՛ներ,  
Իմ գորե՛ղն ու թանկագի՛ներ,  
Կյանքիս է՛ջը, որ չգրված, բայց հաստատված փաստաթու՛ղթ է,  
Սրտիս կա՛նչը, որ չարձակած, բայց անվարան մի մեծ ու՛խտ է:

Քեզ կսիրեմ իմ ողջ կյանքում  
Իմ միա՛կը, իմ անգի՛ներ,  
Կա՛ս, կլինե՛ս դու իմ սրտում  
Իմ գորե՛ղն ու թանկագի՛ներ:

## Փոխադարձաբար...

Բավ է արդեն տանջենք այսպես,  
Դու՝ ինձ, ես՝ քեզ:  
Ասենք խոսքեր ինքնամերժման կամ հաստատման,  
Դու՝ ինձ, ես՝ քեզ:  
Վաղ է գուցե մաա՜ս բարով ասել իրար,  
Գուցե սիրել դեռ կարող ենք,  
Դու՝ ինձ, ես՝ քեզ:  
Սակայն հիմա, երբ մարել է հույսը վերջին,  
Թողնենք գուցե ամեն մեկն իր ճամփով գնա,  
Ու հրաժեշտի խոսքեր ասենք,  
Ես՝ քեզ, դու՝ ինձ...

## Արժանի ես

Ու թե հաճախ մենք վիճում ենք,  
Չենք հասկանում հաճախ իրար,  
Ես հանգիստ եմ, քանզի գիտեմ՝  
Սերն իմ հոգում ծով է վարար:

Արժանի ես ամեն լավին,  
Քանզի դու ես ամեն լավը,  
Գիտեմ, հոգիս, սիրում ես ինձ,  
Ու հեռու է մեզնից դավը:

Կուգեմ արև ճամփիդ շողա,  
Ծաղկալեցուն մի դաշտ թվա  
Քեզ ողջ կյանքը, քանզի դու՝ ես  
Լցրել կյանքն իմ քո ջերմությամբ:

Նվիրական իմ զգացմունքը  
Քոնն է միայն, բարի իմ, լավ,  
Սիրում եմ քեզ ես անսահման,  
Արժանի՝ ես սիրուս անբա՛վ...

## Արդյոք կարո՞ղ էինք...

Հրաժեշտից առաջ ինձ չասացիր ոչինչ,  
Լուռ նայեցիր դու ինձ և նույնքան լուռ հեռացար,  
Հիմա անգույն է ու բարդ այս կյանքում ամեն ինչ,  
Թշվառ հոգու ու իմ լքված սրտի համար:

Երկա՜ր մտածեցի այս ամենի մասին,  
Ինչ կարող էր լինել, բայց և այնպես չեղավ,  
Քանզի մենք՝ ես ու դու, նույնիսկ չհանդգնեցինք  
Փորձել նորից սկսել ու հասկանալ իրար:

Գուցե ճիշտը սա՞ է, ինչ էլ ասեմ արդեն,  
Եղածը եղած է, դու հեռու ես, իմ սեր,  
Եվ քո բիրտ ցասումից ու զայրույթից անդեն  
Չունեմ ուրիշ ոչինչ քեզանից ինձ նվեր:

Մնաց համակերպվել, ապրել, կամ էլ գուցե  
Գոնե փորձել ապրել, ախր դու ապրում ես, չէ՞,  
Իսկ հիշո՞ւմ ես դու ինձ, իմ սեր, ո՞վ գիտե,  
Մի բան հաստատ գիտեմ. քեզ սիրում եմ ես դեռ...



## Այդպես մի՛ նայիր...

Այդպես մի՛ նայիր, քեզ աղերսում եմ, մի՛ նայիր այդպես,  
Քո հայացքի մեջ այնքա՜ն ջերմություն ու քնքշանք կա հեզ,  
Այնքա՜ն մեղմ թախիծ, այնքա՜ն մտորում,  
Որ ակամայից գերիդ եմ դառնում:

Ոչինչ չես ասում, իսկ ես լսում եմ մեղեդին ծանոթ,  
Առանց խոսքերի լու՜ն մորմոքում ես ցավը քո հոգու,  
Աչքերով խոսուն, խոհեմ, կրակոտ,  
Հայացքո՛վ բոսոր, հայացքո՛վ հատու:

Այդպես մի՛ նայիր, քեզ աղերսում եմ, մի՛ նայիր այդպես,  
Դու անթե՜րի ես, դու կատարյա՜լ ես, ես սիրում եմ քեզ:

## Անտանշում եմ

Ես մեղանչել եմ իմ և քո առաջ,  
Մխալ եմ գործել, սեր իմ, ինձ ների՛ր,  
Որ չեմ գնացել սիրուդ ընդառաջ,  
Չեմ ասել խոսքեր զգացմունքիդ հարի՛ր...

Ու միշտ կարծել եմ՝ սիրելը մեղք է,  
Վստահ եմ եղել անմեղ լինելուս,  
Հիմա ես գիտեմ, որ չար անեծք է  
Ապրել առանց սեր, անհույս ու անլույս...

Բազում անգամներ հրաժարվեցի  
Տրված պարզևից ինձ աստծո կողմից,  
Սիրո, որին ես արժանի չէի.  
Հիմա եմ միայն դարձել կարեկից...

Կարողանայի քեզ կողքիս պահել  
Ինձ համար ծանոթ, հարազատ ու թանկ,  
Լինել միշտ քեզ հետ ու չվարանել  
Տալ քեզ սերս մեծ, անվերջ, անհատակ...

Մեղանչել եմ ես ու հիմա արդեն  
Ինչ էլ որ ասեմ, ուշ է երևի.  
Դու հեռացել ես ու սիրովդ անգնե  
Գրավել ափը մեկ ուրիշ ծովի:

Ուրիշ ափին ես դու հանգիստ գտել,  
Իսկ իմ գետակը վարար է կրկին,  
Չի կարողացել նա մի հուն գտնել,  
Ափից է փախչում, խփում մոլեգին...  
Բայց ուշ է... դու չես գա... չես լինի կողքիս...

## Միրով հարվածը

Սովորական մի տամուկ առավոտ  
Ու նույն ցավը նենգ՝ սիրող սրտի մեջ,  
Օրեր՝ հետքերով տխուր ու ցավոտ  
Հանգցրին իմ մեջ կրակը անշեջ...

Միրո մահ զագիր, հոգու հավիող լույս  
Սպանված երագ իմ մեջ այսուհետ,  
Սոսկալի տանջանք, կարոտախտ անհույս  
Ստքից, որ էլ չենք լինի իրար հետ...

Ու սիրո փշուր բազում տարի անց  
Հուզավառ հայացք, հանդիպում հանկարծ,  
Ու միայն հուշեր սիրուց կաթոզին,  
Որ տանջել են միշտ իմ սիրտն ու հոգին:

Հույսեր վշտալի, հույսեր ապարդյուն  
Որ ապրում են դեռ իմ սիրող սրտում,  
Հայացք անտարբեր, հայացք հպանցիկ,  
Այնքա՞ն մտազբաղ, այնքա՞ն թափանցիկ...

Ու սիրավրեպ տխրություն մի խոր,  
Թևաբախ երագ, ալեբեկ հոգի՝  
Միրուց տանջված, տնանկ ու անգոր  
Թափառող աստղեր, թափառող ոգի...

## Միտ առաքյալները

Արի այսօր առանձնանանք  
Ու տարբերվենք մենք բոլորից:  
Միրենք իրար ինչպես ոչ-որ  
Դեռ չի սիրել ծնված օրից...

Արի փախչենք զմրուխտ դաշտեր  
Ու վայելենք կյանքը սիրո,  
Դառնանք նրա լուռ վկաներ  
Վառենք լույսեր, մոմեր հուսո...

Արի ժպտանք մենք արևին,  
Ու նա ժպտա՛յի պատասխան  
Տրվենք անհոգ քամու թևին,  
Թռչենք բարձր ու անվարան...

Իսկ երբ գիշեր դառնա նորից,  
Փարվենք իրար մեր ջերմությամբ,  
Քաղենք սիրո լույս աստղերից  
Լցնենք շուրջը ծո՛վ բերկրությամբ:

Կազմակերպենք սիրո մե՛ծ տոն,  
Դառնանք տանտեր մենք հյուրասեր,  
Հրավիրենք բոլոր նրանց,  
Ովքեր ապրում են դեռ անսեր...

Ու բաժանենք, ու տանք նրանց  
Մեր մեծ սիրո ավելցուկը,  
Թող նրանք էլ փորձեն լուծել  
Միրո քաղցր հանելուկը:

Ուրե՛մս՝ եկ այսօր նեթ  
Դառնանք սիրո առաքյալներ,  
Լինենք վկան այս սուրբ գործի,  
Ու տարածենք ջերմ սերը մեր...

Դառնանք սիրո առաքյալներ...

## Քո աչքերում, ծո՞վ աչքերում...

Լուսաթաթախ մի տխրություն

Քո աչքերում, ծո՞վ աչքերում...

Կարոտ անհագ, հառաչ հոգու,

Քո աչքերում, ծո՞վ աչքերում...

Աստղերի լույս, անսահման հույս,

Քո աչքերում, ծո՞վ աչքերում...

Սեր անձկալի, բոց ցանկալի,

Քո աչքերում, ծո՞վ աչքերում...

Սուլահակ խանդ, ցասում սիրո,

Քո աչքերում, ծո՞վ աչքերում...

Դուրավառ տենչ, հոգու վառ կանչ,

Քո աչքերում, ծո՞վ աչքերում...

Գիշեր ու զօր տանջող հայացք,

Քո աչքերում, ծո՞վ աչքերում...

Հարված հզոր ու մեղմ քնքշանք,

Քո աչքերում, ծո՞ր մեղրագույն...

Խինդ սիրակեզ, սիրաբաբախ,

Քո աչքերում, ի՛մ աչքերում...

Աչքերը քո սիրածարավ,

Ի՛մ սրտի մեջ, բա՛ց սրտի մեջ...

Խորին խոնջանք, կրա՛կ անմար,

Կրակ անշեջ ի՛մ սրտի մեջ...

## Հույս-ը

Գիշերվա աղոտ մշուշի հետ ցրվեց խավարը իմ հոգու,  
Քո աչքերը ծո՛ր մեղրագույն լույս վառեցին իմ խենթ հոգում...

Ու հասկացա, որ դու ես իմ երագների երագածը,  
Ի՛մ հոգին ես ու սիրտն ես դու, իմ միակը, իմ ուզածը:

Ու թե կրկին գիշեր իջնի քաղաքին իմ ու դաշտերին,  
Ես թույլ չեմ տա՝ հանկարծ խամրի պատկերը քո ու քո ոգին

Իմ մտքի մեջ, իմ հուշերու՛մ... Վառ կժաա, իմ սեր, հավետ  
Թեկուզ ընդմիշտ դու հեռանաս, թեկուզ լքես ինձ առհավե՛տ...

## Մերը չի մեռնում

Մերդ սպանել կուգես, գիտե՛մ՝  
Հոգնել ես դու ինձ սպասելուց,  
Բայց սերը մեր մենք չե՛նք սպանում,  
Ինքնասպան է սոսկ այն լինում:

Կախաղանի թոկի նման՝  
Փաթաթվելով ինքն իր բկին՝  
Սեղմու՜մ, սեղմու՜մ կոկորդը լայն,  
Անշունչ է նա դառնում կրկին:

Ու հարություն՞ն գուցե առնի  
Առանց մարմնի, միայն հոգին:  
Մի՞րո հոգի՛ սիրամբունջ,  
Կյանքի՛ բերկրանք, կյանքի՛ վառ շունչ:

## Կորուստ

Աղոտ եմ հիշում ամեն-ամեն բան,  
Թե լույս ջերմությունն արևի ամռան,  
Թե ցուրտ քամու հոինդն հոգևաբեկ աշնան...  
Էլ չեմ ասում՝ զարունն ինչպես ես չեմ հիշում,  
Մեր սիրտ զարունը, որ մասց հուշերում:  
Ոչինչ էլ չեմ հիշում, գիտեմ միայն՝ տոթ էր,  
Օղբ չէր հերիքում, հետն էլ անձրևոտ էր,  
Եղանակն էլ ինձ պես մերթ լալիս էր աղի,  
Մերթ ծիծաղում էր բիրտ՝ զերթ գազան կատաղի:  
Արթնացա ես հոգնած երազից իմ թախծոտ,  
Ու չեմ հիշում կարծես... Եթե միայն աղոտ...  
Չեմ հասկանում, թե իմ երազի ո՞ր մասում  
Քեզ կորցրի, իմ սեր՝ գտնելով լոկ ցասում...



## Ես ու իմ խռոված սիրտը

Խռովել է սիրտն իմ, նորից է խռովել,  
Մանկան նման անմեղ, շյուղի նման դալար,  
Կյանքի հարվածներից նա դարան է մտել,  
Արցունքով է ցողվել սրտիս աչքը անմար:

Սիրտն իմ քեզ է տենչում, նա սպասում է դեռ,  
Չի ցանկանում այն իմ որոշումն ընդունել,  
Հրաժարվելով մարմնից հուսալի՝  
Գերադասում է անտուն նա ապրի:

Միա՛յն թե ապրի, քեզնով ապրի, իմ սե՛ր,  
Առանց սիրո սիրտն իմ չի կարենա ապրել,  
Ու կարծում է, որ լավ է մեռնել սիրով,  
Քան թե ապրել ունայն, անսեր, անկորով:

Հասկանում եմ նրան, սուրհանդակ ուղարկում,  
Փորձում կնքել դաշինքն իմ մեծ հաշտության,  
Ու պայմանը մեկն է՝ ես ու իմ խենթ սիրտը,  
Քեզ սիրում ենք նույնքան վեհ ու անսահման:

## Պատգամ

Ու՛ր էլ գնաս, ու՛ր էլ լինես,  
Կյանքում մի բան դու միշտ հիշի՛ր...

Այն, ինչ հոգուդ խորքում ունես,  
Անտարակույս դու վա՛ռ պահիր...

Թե քեզ ասեն, մոռացել եմ,  
Էլ չե՛մ սիրում, հեռացել եմ,  
Էլ քո շնչով չե՛մ ջերմանում,  
Էլ քո կանչով չե՛մ արթնանում,  
Էլ չե՛մ սիրում, չե՛մ տենչում քեզ,  
Չհավատա՛ս, արի ու տես,

Որ այս դաժան կյանքում, ուր կեղծ,

Սուտ խոսքեր են ու դու անեղծ

Պիտի հիշե՛ս ու վա՛ռ պահես հոգուդ խորքում

Քո իմացած իմ այն ԵՍ-ը,

Որ սիրու՛մ է, քե՛զ է տենչում,  
Կարոտու՛մ է, քե՛զ է կանչում,  
Ամեն աչքից քե՛զ է նայում...  
Առանց դիպչել քեզ զգու՛մ է,  
Առանց տեսնել նկատու՛մ է,  
Առանց խոսքի հասկանու՛մ է,  
Ո՛ր սիրում է, քե՛զ սիրում է...

## Վերջին անգամ...

Վերջին անգամ թո՛ղ որ ասեմ մշուշապատ իմ մտքերից բխո՞ղ,

Ժայթկո՞ղ այս տողերը....

ՍԻՐՈՒՍ ԵՄ ՔԵԶ....

Վերջին անգամ թո՛ղ անրջեմ, որ քո սերը, սիրտն ու հոգին

Ի՛մս են էլի

ՈՒ պիտի դեռ երկա՜ր-երկա՜ր ջերմ փափագեն գրկել ու ինձ

Սեղմել կրծքիդ ու շշնջալ....

ՍԻՐՈՒՍ ԵՄ ՔԵԶ...

Թո՛ղ, որ ասեմ վերջին անգամ, կարծես դեռ նոր պիտի ասեմ

Սկսնակ, բայց և անհամարձա՛կ ու անպատրա՛ստ պատանու

պես....

ՍԻՐՈՒՍ ԵՄ ՔԵԶ....

Վերջին անգամ.....

ՈՒ կամ էլ թե նախավերջի՛ն անգամ ասեմ, որ սիրու՛մ եմ, քե՛զ սիրու՛մ եմ,

Ո՛չ թե նման լոկ այն մտքին, որ իր վերջում պահանջում է նա վերջակետ,

Այլ թո՛ղ ասեմ սիրում եմ քեզ այնքա՜ն մոլի, այնքա՜ն կրքոտ

Ու թո՛ղ դնեմ հենց այդ տեղում ես բազմակետ...

ՍԻՐՈՒՍ ԵՄ ՔԵԶ...





## Մի ամբողջ հավերժություն...

Քանի՜ երկար ժամ է անցել  
Մեր այն վերջին բաժանումից,  
Որը սկիզբն է նոր հանդիպման, մե՛ր հանդիպման...

Երկա՛ր ու ձիգ քսանութ թույլ  
Ես չեմ լսել քո ձայնն անհոգ,  
Ու չեմ տեսել դե՛մքդ լուսե,  
Ու կարո՛տն է խեղդում արդեն ինձ անողոր...

Ես կորցրել եմ վայրկյանների քանակը այն,  
Որ ստիպել են ինձ տառապել,  
Հաշվե՛լ նրանց, նորի՛ց հաշվել,  
Ու մտածել՝ ջանալով քեզ կրկին տեսնել  
Գոնե մտքի՛ս պատուհանից  
Հուշերիս մե՛ջ, իմ աչքերու՛մ,  
Ուր պահում եմ պատկերդ աննորձ  
Այնքա՛ն զգույ՛շ, սիրո՛վ լեցուն...

Ամբո՛ղջ կես ժամ, քսանութ թույլ,  
Ու կամ էլ թե հազա՛ր վեց հարյուր ութսուն վայրկյան  
Դու կողքիս չես, ո՞նց դիմանամ...  
Անողո՛ք ես, անգու՛թ, դաժա՛ն...

## Ուշացած...

Վաղո՜ւց արդեն ժամանակն է, որ հասկանաս,  
Որ առանց քեզ ես նման եմ արմատախիլ եղած,

Լքված ու չորացած մի բարդենու,  
Որ տենչում է գեթ մեկ անգամ կրկին տեսնել  
Իր սիրածին, մինչև գետի կամուրջ դառնա...

Վաղո՜ւց արդեն ժամանակն է, որ հասկանաս,  
Թե առանց քեզ որքա՜ն տխուր ու ձանձրալի,  
Որքա՜ն անմիտ ու անիմաստ պիտի ապրեմ այս աշխարհում,

Մինչև մահը իր ճիրանը կառնի հոգիս  
Ու կանջատի՝ նրա ցավը ընդմիշտ մարմնից...

Վաղո՜ւց արդեն ժամանակն է հասկանալու,  
Որ առանց քեզ կարծես չկա՜մ, չեմ լինելու...

## Մի՛ գթա ինձ...

Մի՛ գթա ինձ...

Ես ուզում եմ՝ սիրես սիրո՛վ մի մարդածին,  
Ու արես իմ չփայլող, բայց չմարող կյանքի ուղին,  
Ուզում եմ, որ ինձ հասկանա՛ս,  
Գա՛ս ու դառնաս թովի՜չ երազ,  
Սիրես այնպես, ինչպես ե՛ս քեզ...

Բայց չգթաս, չվարանես,  
Ժայռից թափվող ջրվեժի պես  
Սերդ հորդի առատահոս  
Ու պարզևի հոգուս անդորր:

Թեկուզ պոռթկա մի անվարա՛ր խնդության լույս,  
Որ կգտնեմ զուտ աչքերում քո՛ լուսեղեն,  
Որ կգտնեմ զուտ հայացքում քո՛ մոզական  
Ու կփարվի շունչը հոգուս խենթ խնդությա՜ն:

Մի՛ գթա ինձ...

Սիրի՛ր դու ինձ սիրով անկեղծ,  
Դարձի՛ր կյանքիս ուղեկիցը, երազ անեղծ...



## Անկեղծության պակասը

Այս աշխարհում ամենից շատ քե՛զ եմ երագել,  
Իմ ողջ սե՛րը, ջերմությու՜նը քե՛զ եմ նվիրել...

Սպասել եմ, որ ամոթխած հայացքով թաքուն  
Կպատմես ինձ, թե ինչպես ես մտացել անքուն,  
Թե ինչպես ես երագել ինձ ու սիրել անվերջ,  
Բայց դու, ա՜խ դու հեռանում ես, չես խոսում անկեղծ:

Ես, սիրելի՛ս, ուզում եմ, որ ընդմիշտ իմանաս...


Սերը երբեք չե՛ն թաքցնում, երա՜զը անհաս...

Թե չէ հանկարծ մինչ հասկանաս և ուզես խոսել,  
Կարող եմ և անդա՜րձ ճամփով ես անհե՛տ կորչել...

## Մենամարտ

Զարմանալի է՝ ես խոռվել եմ ինքս իմ ես-ից,  
Ա՛յն ես-ից, որ հանդգնեց հրաժարվել քեզնից:  
Ապրե՛լ առանց քեզ, շնչե՛լ առանց քեզ,  
Թախծե՛լ առանց քեզ, թեկու՛՞զ և թախծել...

Ու մենամարտի եմ կանչում իմ ես-ին:  
Բայց չե՛մ հասկանում հարկավ՝ ինչ անել:  
Ու՞մից խոռվել, ինձնից, թե՞ քեզնից,  
Թե՞ իմ նորահայտ, ինքնասեր ես-ից....



## Քո ստվերը

Ես ծնվել եմ լինելու այն մեկը,  
Որ պիտի հսկի՝ քեզ ստվերի նման,  
Լուսակարկաչ քո հայացքը  
Պիտի որսա՝ ամեն վայրկյան:

Ու, խենթացած քո ջերմ սիրուց,  
Միրի՝ պիտի խնի նման,  
Միրատուչոր քո շունչը տաք,  
Պիտի զգա՝ հու՜ր հավիտյան:

## Վերածնունդ

Սեր... Դու որտեղի՞ց, ինչպե՞ս ծնվեցիր,  
Ո՞վ էր սուրբ հոգին, որ քեզ կյանք տվեց,  
Մի՞թե այս փթի՜թ, հրա՜շք աշխարհում,  
Եկար, ու մի կյանք քեզանով լցվեց:

Ու ծաղկե՜ց հոգիս, խինդով լցվեցավ,  
Սի՛րտն իմ սիրատենչ քեզնո՛վ արբեցավ,  
Եվ ուրախացա՜վ, ոնց ուրախացա՜վ,  
Ու դարձա՜ն օրերն անհոգ ու անցավ:

Ապրեց իմ հոգին, փթթեց վարդի պես,  
Սիրո գգվանքով ու շնչով անտես,  
Սեր... Դու որտեղի՞ց, ինչպե՞ս ծնվեցիր,  
Այդ ինչպե՞ս եղավ՝ հոգիս այրեցիր:

### **Քեզ հետ ու առանց քեզ...**

Սարսափ ու ցուրտ է, երբ դու կողքիս չես,

Չե՛մ կարող շնչել, դժվա՛ր է ասես,

Չե՞ որ երբ չկաս, տանում ես քեզ հետ


Իմ ջերմությունը, հոգի՛ս առհավե՛տ...

Իսկ երբ կողքիս ես, ամառ է կրկին,

Ջինջ է, ուզում եմ նայել երկնքին,

Ու ճշա՛լ, գոռա՛լ, ու աղաղակե՛լ

<<Միբու՛մ եմ>>,-անվերջ քեզ նորից ասել:



## Ինքնահարցում

Կգա մի պահ, երբ հարց կտաս ինքդ քեզ,  
Արդյոք ճիշտ է, որ սիրում եմ նրան ես:  
Կմտածես խորհրդավոր հարցիդ շուրջ,  
Կհասկանաս, որ եղել եմ սոսկ անուրջ:

Երա՞գ գուցե անհաս, գու՞ցե և պատրանք,  
Կի՛րք, ցանկությու՛ն, զիջու՛մ, զղջու՛մ ու զրկա՛նք,  
Թե՞ իրական սիրո մասին ես խոսում,  
Իսկ միգուցե զայրու՞յթ, թախի՞ծ ու ցասո՞ւմ...

Ու հարցնում ես, թե սիրո՞ւմ եմ արդյոք քեզ,  
Թե տարվա՞ծ եմ, կարոտու՞մ եմ արդյոք ես,  
Մի բան կասեմ ի պատասխան քո հարցի,  
Դու պիտի զգաս առանց որևէ բայց-ի...

Իսկ թե չես զգում՝ բառերն այստեղ անգոր են,  
Թո՛ղ աչքերս անվերջ ու միշտ կարոտեն,  
Փնտրե՛ն թող քեզ, երկա՜ր փնտրեն ու գտնեն,  
Այնժամ գուցե դու հասկանաս՝ սիրում եմ:



## Վատված հոգին...

Վազեցի ես քո գիրկը  
Խանդադանքով իմ սրտի,  
Ինչպես թիթեռն՝ հրճվելով,  
Դեպի բոցը կրակի:

Այրեցի՛ր ինձ քո սիրով,  
Ու վառեցի՛ր իմ հոգին,  
Այրվող սրտի թրթիռով  
Այն հայտնվեց աշխարհին:

## Անընկեր...

Գիշերվա մթին գրկում անհրապույր  
Գրիչն ու թուղթը ինձ ընկեր լինե՛ն,  
Տրտում կարոտի գրկում սևաթույր  
Տաղերն ու երգը ինձ ընկեր լինե՛ն:

Նույնն է սեղանս, աթոռս նույնն է,  
Միայն մտքերն են բազում ու տարբեր,  
Նույն մոռմոքները ու սերս նույնն է,  
Հուշերս են միայն աղո՛տ, կարեւլեր:

Քաղաքում այս մութ, իմ մութ սենյակում,  
Դու չե՛ս գա ու չե՛ս լինի ինձ ընկեր,  
Միայն գրիչն իմ ու թուղթը նույնն են,  
Միրո տողերն են վրան լո՛կ տարբեր:

## Չգտնված խրխիրը

Անդարձ օրերի տմույն մշուշում  
Ինչ-որ բան մնաց իմ հոգուց կարծես,  
Մի մասունք, նշխար, ու ես մտորում,  
Ու ես լալիս եմ այդ ցավից ասես...

Երնե՛կ սթափվեի ու երազ լինեք,  
Կողքիս լինեի՛ր առաջվա նման,  
Ինձ ջերմ գրկեի՛ր ու համբուրեի՛ր,  
Ու բացվե՛ր հուսո առավոտ գարնան:

Սակայն երա՛զ չէ, սթա՛փ եմ ու արթո՛ւն,  
Դու չկաս կողքիս, ես քե՛զ եմ փնտրում,  
Հոգուս կիսավեր, փլված ամրոցում  
Խրխիր՝ փի պատառ է դեռ պակասում:

## Դրժում

Դու հեռացա՜ր, բայց ասացիր. <<Ես կգա՛մ,  
Քո հույսերին ու քո կյանքին շու՛նչ կտամ,  
Կբերեմ քեզ արևների լու՛յսը ջերմ,  
Ո՛ր փարվելով քո տաք շնչին՝ կանրջեմ>>

Ո՛ր մենք նորից մեր մայրերով կքայլենք,  
Լուսնի լույսի շողիկներին կփարվենք,  
Ձեռքս բռնես, ես շփոթված կնայեմ  
Ո՛ր կկարդամ քո աչքերում.<<Միրում եմ>>:

Դու հեռացար, բայց ասացիր <<Ես կգա՛մ>>,  
Ո՛ր ինձ թվաց՝ հենց այդպես էլ կլինի...  
Իսկ հիմա, երբ հուսահատ եմ, ա՛յս անգամ  
Թո՛ղ իմ երազն իրականում սե՛ր գտնի...

## Իմ սիրո տարեդարձն է այսօր...

Ես այսօր ուրախ եմ անչափ,  
Իմ սիրո տարեդարձն է այսօր,  
Խինդն ու բերկրանքը անափ  
Թող դառնան նրան անկոչ հյուր:

Ու վառվեն թե մոմերը բոսոր,  
Թող վառվեն իմ սիրո լոկ համար:  
Թե երգեն թռչունները բոլոր,  
Պիտ երգեն իմ սիրով անդադար:

Թող պարի քամին մեղմ ու հեզ,  
Ու նազանք բանեցնի քնքշանքով,  
Ու խանդեմ ես քամուն սիրակեզ,  
Պարուրեմ իմ սիրուն՝ իմ սիրով:

Աստղերը գրեն երկնքում  
Բառեր դեռ երբեք էլ չասված,  
Ոչ-ոքից, ոչ մի այլ առիթով  
Աշխարհում սիրո չլսված:

Իմ սերը հասուն է արդեն,  
Չափահաս է այսօր նա դառնում,  
Եվ պատվով է նա սիրակուռ  
Իր տասնութ տարին բոլորում:

Եկ խմենք իմ սիրո առիթով,  
Իմ սիրո, որ քո սերն է նաև,  
Մեր սիրո տարեդարձն է այսօր,  
Թող ապրի նա երկա՜ր տարիներ...

31.08.2012

## Անվերջ սպասում...

Նորից մթնեց ու լուսացավ,  
Դու, սիրելի՛ս, տուն չդարձար:  
Ուր ես տեսնեմ, ինչո՞ւ չկաս,  
Կգա՞ մի օր, որ դու ետ գաս:

Աշուն եկավ, եկավ ձմեռ,  
Խավար է, ու մենակ եմ դեռ:  
Կարծես չկաս, չես էլ եղել,  
Իսկ ես ո՞ւմ եմ երկա՜ր սպասել:

Արև ծագեց, ծագեց լուսին,  
Ու՞ր ես, արի՛, կյա՛նք տուր հույսիս,  
Թե չէ այսպես մենա՜կ, անհու՜յս,  
Գնում եմ ես դեպ վերջալույս:

## Անկոչ հյուրը

Իսկ տեսե՞լ ես դու երբևէ գալը անգութ փոթորիկի...

Ես տեսել եմ...

Իսկ զգացե՞լ ես...Ես զգացել եմ...

Գարնանային ծաղկունք էր, խինդ, ու նա եկավ՝ անողոքը,

Փութը թափեց ու բողոքը, քանդեց հոգին իմ բերկրածին:

Անցա՜ն ժամեր, օրեր անցան: Երբ աչքերը իմ բացվեցին,

Երբ ես կրկին ուշքի եկա, փլատակ էր ու ավերակ,

Շուրջս ուրիշ ոչինչ չկա՜ր...

Չկար հոգուս լույսը անմար, չկար կյանքին կապող կամար,

Որի ճամփով այնքա՜ն ծանոթ քայլել էի հեզ ու շփոթ:

Ու չկար նա, պատկերը ջերմ...

Նոտագրած իմ հուշերում էլ չգտա սերս վսեմ:

Երկնքում լուրթ փոքրիկ աստղեր, տխուր լուսին, օր մթաստվեր,

Չկար արև ու ջերմություն, սոսկ գողունի համբերություն՝

Քեզ գտնելու սին պատրանքով...

Ու մենության արգելանոց, դատարկ հոգու փլված ամրոց:

Լքված մի նավ, դառը խաբկանք, լացող հույսեր, կյանքի խոյանք...

Հարազվարթ մի բնություն, սրտում պահված թանկ էություն,

Եվ այդ անգութ փոթորիկից ինձ մնացած ամայություն...

Ուրիշ ոչինչ... ուրիշ ոչինչ...

21.09.2012





## **Քո համբույրը...**

Ձյան փաթիլը նստեց շուրթիս  
Փափուկ, ինչպես քո համբույրը,  
Զղիմացավ ջերմությանը,  
Հալվեց, ինչպես քո համբույրը:

Բայց փաթիլն այդ պիտի սառեր,  
Տաք շուրթերիս հանգչեր պիտի,  
Մնար հավետ դրոշմանիշ,  
Կնիք, ինչպես քո համբույրը:

## Եկ պարզապես սիրենք...

Տխրությունը օրվա փոխվեց լույսի հավերժ,  
Եվ արթնացավ իմ մեջ փոքրիկ մի շող հույսի:  
Իմ մտքերը բազում այնքա՛ն իրարամերժ  
Խաչվեցին հանգույցում խավարի ու լույսի:

Երբ աչքերը թախծոտ կրկին իմ բացվեցին,  
Երբ տժուջան լույսը հոգիս պատեց նորից,  
Երբ սկսեցին ծնվել հույսերս բերկրածին,  
Գետը վարար իմ մեջ շեղվեց հանդարտ հունից:

Կուզեի քո սերը լիներ լույս մշտացայտ,  
Լուսավորեր ճամփաս ամեն վայրկյան ու պահ,  
Իմ խավար ճամփեքին մշտապես գար ի հայտ,  
Լիներ ընկեր հոգուս անդադա՛ր, աներկբա՛...

Թե սիրեիր այդպես բոլր սիրով քո գեղուն,  
Ու թե դառնար սերդ մի լուսաշող խթան,  
Կկառչեի շողից ամեն նրա ծորուն,  
Ու կյանքում էլ երբեք չէի թողնի նրան...

Արի ասենք իրար գուտ խոսքեր սրտաբուժ,  
Խոսենք նուրբ ու հանգիստ, ձայներով փաղաբուշ,  
Ու թող շողա հավերժ երկնքում լուսաբախ  
Սիրո աստղը մեր՝ լայն ժպիտով ակնբախ...  
Եկ պարզապես սիրենք...

21.09.2012

## Կարապի երգը

Ես փակում եմ իմ աչքերը,  
Որ չտեսնեմ թե ինչպես է ինձ շրջանցում  
Ու համրաքայլ, լուռ հեռանում սերս լուսե:  
Ես փակում եմ ականջներս,  
Որ չլսեմ տխրաթաթավ ձայնդ մեղմիկ,  
Որն իր քաղցր ելևէջով ու խոսքերով իրարամերժ  
Պոկելու է հոգուս ծառից ու քամուն տա տերևները բոլոր  
հավերժ...  
Ու բաց է իմ սիրտը միայն,  
Որ ձգտում է քեզ տենչալի՜ս,  
Սակայն ամեն հնարավոր հանդիպումից խույս է տալիս:  
Վախկոտ է նա ու երկյուղոտ,  
Ու նման է մի կարապի,  
Որ փորձում է լինել մոտիկ իր սեփական, լուռ քարափին...  
Եվ փնտրելով իր բորբ սիրուն՝  
Երգում է միշտ այնպե՛ս ծորուն...  
Կարապի երգ... Վերջին անգամ...  
Թող նա տևի գեթ մեկ անգամ,  
Երկա՜ր տևի: Թող տևական լինի ձայնը, երգը նրա,  
Եվ այսուհետ մենք անվանենք կարապի երգ՝ երգը սիրո,  
Սկիզբը սիրո, ոչ թե վերջը...  
Ու հենց լսենք կարապի երգ՝ մենք հասկանանք սիրո հնչյուն,  
Սիրող հնչյուն, ոչ թե անկարծ  
Մահվան ծյուրանք ու վերջաբան...  
Շա՛տ կուգեի երգեր երգը կարապը իմ,  
Բայց ապրելու ու սիրելու բորբ ցանկությամբ...

21.09.2012

## Ներիր...

Ներիր ինձ, իմ սեր՝ խաղաղ խելագարիս,  
Ծածուկ արցունքներիս ու կարոտիս համար,

Քեզ փնտրելու կանչիս, սիրատուչոր լացիս,  
Համբերությամբ սպասած ամեն օրվա համար...

Իմ թարթափուն հույսի, իմ կարկառուն լույսի,  
Քեզ այնքա՜ն շատ տալու ու չուզելու համար...

Իմ բորբ սիրո լույսի, անգայթ ճշմարտության,  
Անսահմա՛ն սպիտակի, ո՛չ թե սևի համար...

Հարազվարթ լացի, տխրադեմ ծիծաղի,  
Անմա՜ր երջանկության, լու՜ռ տանջանքիս համար...


Գերմարդացած հոգու, նրա հզոր կանչի,  
Միրո կանչող ձայնի ու տենչանքի համար...

Թե կարող ես՝ ներիր, ներիր դու ինձ դարձյալ,  
Ու մի ջանա նորից ինձ՝ անմիտ սպասողիս,  
Խաղաղ խելագարիս, հոգին դու հասկանալ...  
Թե կարող ես՝ ներիր...

21.09.2012

## ՄԵՐ Է ԹԵ՞ ՊԱՏՐԱՆՔ.... ԲՆԱՎ ՉԳԻՏԵՄ...

Մեր է, թե՞ պատրանք... Բնա՛վ չգիտեմ.  
Բայց մի բան հաստա՛տ կասեմ, սիրելի՛ս...  
Այն տարածե՛լ է իր թևերը լայն,  
Ու իր ողջ ուժով պատել է հոգիս...  
Չգիտեմ ինչու, բայց քեզ տեսնելիս՝  
Շփոթված հայացքն իմ չեմ կարող թաքցնել,  
Ու լուրջան մեջ ինձ շրջապատող,  
Իմ սրտի բաբա՛խն եմ անընդհատ լսել...  
Պատրանք չե՞ միթե, որ սիրում եմ ես,  
Կամ սեր չե՞ միթե պատրանքն հիրավի,  
Մեր է թե՞ պատրանք,.... բնավ չգիտեմ...  
Կամ էլ թե ՄԵՐ է, հաստատ... երևի...



## Անպատասխան...

Երբ սիրում ենք, չենք հասկանում շատ անգամներ,

Թե ո՞րն է ճիշտ, ո՞րը սխալ,

Ինչու՞ լռել, ինչու՞ տոկալ:

Ու մոլորված ճամփորդի պես

Լուռ նայում ենք մեկ դե՛ն, մեկ դե՛ս,

Ու փորձում ենք պատասխանել

Շատ հարցերի, որ այդպես էլ

Անպատասխան թողնում վերջում,

Նորից նստում, լու՜ռ խորհում ենք...

## Խնդրանք...

Թո՛ղ, որ նայեմ քո աչքերին,  
Որոնք այնքա՛ն ջինջ ու պարզ են,  
Թո՛ղ հասկանամ՝ ինչ կա այնտեղ,  
Որ ինձ համար դեռ երազ է:

Թո՛ղ, որ բռնեմ ձեռքդ ամուր,  
Զգամ, որ դու կա՛ս իմ կողքին,  
Թո՛ղ, որ ապրեմ սիրով անհուն,  
Մի՛ չարչարի դու իմ հոգին:

Մի՛րտս ցավին չի դիմանա,  
Նա կուգենա թախծել նորից,  
Եվ ա՛յս անգամ կանեանա  
Աշխարհն համա՛յն, անկարեկից:




## Գուցե օգնե՞ք...

Գուցե դուք օգնե՞ք, մարդիկ կամ հավքեր,  
Գտնել ինձ կորցրած երազը կյանքիս,  
Չափել եմ անթի՞վ սարեր ու ձորեր,  
Բայց չե՛մ հանդգնել վերջ դնել հույսիս:

Գուցե տե՞սել եք նրան՝ այն մեկին,  
Որ թողեց մենակ ու լու՜ն հեռացավ՝  
Չհասկանալով, որ սերը կրկին  
Չի՛ ծնվելու էլ, նա հիմա մեռա՞վ...

Մարդի՛կ սիրելի, ասացե՛ք նրան,  
Եթե կտեսնեք մենա՞կ ու տրտում,  
Որ ես սպասում ու սիրում եմ նրան  
Ու կա՛ վերադարձ դեպի սիրո տուն:



## Դու ամենու՜ր ես...

Ի՞նչ է սա, տե՛ր իմ, ցնո՞րք, մղձավա՞նջ,  
Անավարտ մի ե՞րգ, մի անբիծ հեքիա՞թ,  
Դու ամենու՜ր ես, հոգեթո՛վ անուրջ,  
Դու ի՞նչ է, անսպա՞ռ ես, անծայր մի կամու՞րջ:

Տանն եմ, մեր տանն ես, հետո պարտեզում,  
Իմ մեջ ապրում ես, դու կա՛ս, չե՛ս սպառվում,  
Ե՛վ հյուրասենյակ, և՛ ճաշասենյակ  
Բացել են դռնե՜ր, գորգե՜ր ոտքիդ տակ:

Փախչում եմ քեզնից, փակում դուռն արագ,  
Բայց, օ՜, աստված իմ, նորից դու՛ ես, դու՛,  
Դու ամենու՜ր ես, սիրում եմ անհա՛գ,  
Չե՞ որ մտքումս ես ու սրտումս ես դու...



## Երազ

Երագում այսօր քե՛զ տեսա կրկին,  
Արթնացա արագ, լուռ ու մտահոգ:  
Կարծե՜ս տեսել եմ մի բարի փերի,  
Այնքա՜ն սիրաշունչ, թեթև ու անհոգ:

Ու սպասում եմ դեռ, սպասում անդադար,  
Որ կգաս ինձ մոտ, ինչպես երագում,  
Կպատմես դու ինձ, կհնչեն վարար,  
Խոսքե՛րդ մեղմիկ, հանդարտ, անտրտում:

Կյանքն էլ գեթ լինե՛ր երա՛զ, առեղծվա՛ծ,  
Որի սահմանին տիրում է բարի՛ն,  
Տեսնեի՛ր դու պարզ, թե ինչ է գրված,  
Քո լու՜ն մենության տապանաբարին:

Արթնացա՝ չկաս: Երա՜զ էր, պատրանք,  
Սին հույսեր՝ պահած ծովի մեջ հոգուս:  
Ծովի, որ չունի եզր ու հատակ,  
Ու կույ է տալիս ամեն ինչ անհու՜յս:  
Ու անվերադա՜րձ...



## Անծանոթին...

Մենք չենք ճանաչում իրար տակավին,  
Բայց, Տե՛ր իմ Աստված, ի՞նչ է կատարվում,  
Կարծես թե գիտեմ քեզ հարյուր տարի,  
Ու հարյուր տարի քեզնով եմ ապրում:

Իսկ քո ժպիտը... Այնքա՛ն մեղմ ու ծո՛ր,  
Աչքերդ խոսուն, թախծոտ ու անգոր,  
Հայացքիդ մեջ կա լռություն մի խոր,  
Բայց և շա՛տ խոսուն, և լսվա՛ծ, և նո՛ր...

Չեմ ճանաչում քեզ, ու քեզ սիրում եմ,  
Բայց Տե՛ր իմ Աստված, այդպես լինո՞ւմ է:  
Հանդիպեցի քեզ, ու կյանքն իմ փոխվեց,  
Տխուր երազս բերկրանքով լցվեց...

## Ձմեռ եմ ուզում

Դու ասում ես՝ սերը երբեք շատ չի լինում,

Չի ունենում նա ավելցուկ ու չի դառնում գլխացավանք,  
Թե սիրում են, շա՛տ են սիրում, ու սիրում են ծո՛վ լիությամբ,  
Տալիս են շատ, ստանում են քիչ, նվիրվում են ողջ էությամբ:

Չեն հագնում սիրուց անմար, թեկուզ բովվեն նրա հրից,

Ու խորովվեն, ու խորովեն, մեկ է՝ սերն է կանչում նորից:  
Ու թե հաճախ ինքդ ես հոգնում քեզ հասցված նենգ հարվածից,  
Ու թե հաճախ վերք է հյուսվում սրտիդ վրա բիրտ խոսքերից,

Խանդից մաշվում, դառնում կես բուռ,

Հետո կրկին խոնարհ ու լուռ,

Ստանձնում ես դերդ բարի, տեղդ անկեղծ ու անառիկ,

Մեկ է՝ տոթ է, ու խեղդվում ես, երբ ամառ է տարի՜ն բոլոր:  
Ու մի օր էլ հանկարծակի, չտանելով օդի ճնշումն այդ սոսկալի,

Դու գոչում ես. <<Բա՛վ է, նորից ամառ եկավ:

Չկա զարուն, կամ թե աշուն. ես հալչում եմ, ձմե՛ռ ուզում>>:

Թեկուզ ձյուն տեղա իմ սիրո գլխին,

Այն սիրո, որն ինձ ցավ է պատճառել,

Գարնան ու աշնան, ձյան ու անձրևի,

Քամու տեղ միայն արև է կրկին:

Իսկ լավ չէ՞ արդյոք, երբ ամեն ինչը

Լինում է իր ճիշտ տեղին ու ժամին:

Շա՛տ է արևը, այրում է այն ինձ:

Դու ինձ լսո՞ւմ ես, ձմեռ տուր դու ինձ...

Ձմե՛ռ եմ ուզում...



## Հրաժեշտի երկտող

Ես հեռանում եմ, ու չեմ խոստանում, որ կգամ նորից,  
Սրտի թրթիռով, հոգու տրտմությամբ, քիչ թաց աչքերով...

Ես հեռանում եմ...

Սակայն իմացիր, որ ամեն զարկը երակներիս մեջ

Մի լուռ աղոթք է քո կյանքի համար:

Որ ամեն քայլս քեզինց անջատող

Դնում եմ հողին ես աղոթելով...

Ես վախենում եմ իմ սիրո համար

Եվ խնդրում Աստծուն, որ դու լավ լինես:

Ես հեռանում եմ, բայց սիրելով քեզ:

Գուցե չգիտես, բայց տանում եմ ես

Ինձ համար շա՛տ թանկ հիշողություններ,

Որոնք կարթնացնեն ինձ լուսադեմին

Ու կերգեն օրոր քնելուց առաջ:

Կդառնան շողեր իմ նոր արևին

Եվ անամպ երկինք նոր օրվաս համար:

Կդառնան մտրակ՝ հարվածող մեջքիս,

Որի թելերը հյուսված են սիրուց, բայց ատելությամբ,

Քաղցր ու դառնաղի իմ երագներից,

Ու դրանք փշրող քո միշտ անկոտրում հպարտ էությանբ:

Ու եթե ուզեմ թաքցնել հանկարծ

Հիշողությունս հեռու՝ ճամպրուկում,

Կհանձնեմ թղթին պարզ ու անապակ՝

Ցավս դարձնելով ինձ թանաքաման,

Արյունս՝ թանաք...

Ու եթե հանկարծ նորից երբևէ

Կպարուրի ինձ քեզ ետ կանչելու

Մի անպարագիծ, անե՛զր փափագ,

Կնետեմ կյանքի օվկիանոս մեծ ես

Ճամպրուկն այդ՝ լցված հիշմունքով անհագ...

Բայց ես չգիտեմ, թե ինչպես կապրեմ առանց քեզ, իմ սե՛ր...

Իսկ կապրե՞մ տեսնես...

## Դու՝ մարդկային փու՛շ կարծրատիպ...

Յուրաքանչյուր անմիտ քայլդ հաջորդվում է սայթաքումով,  
Ու շարանից սխալներիդ նույնիսկ զավա՛կդ է տուժում,  
Մի՞թե բարդ է, մա՛րդ արարած, որ հասկանաս՝ քո ցատումով  
Դու չե՛ս հասնի ոչ մի բանի, ու քո կյա՛նքն է քեզ նզովում:

Վերաբերմունքով խոժոռաբարո  
Կշահես ոչի՛նչ այս ունայն կյանքից,  
Գոնե հասկացի՛ր, որ չե՛ս դու անգո,  
Միս ու արյուն ես, եղի՛ր կարեկից:

Կեղծիքից փախի՛ր ու լսի՛ր գուրով  
Հոգու աղերսը քո մանվածապատ,  
Նրա ընդվզումն հաշվի առնելով՝  
Ե՛տ կանգնիր քայլից անմիտ, խրթնիմաստ:

Գիտեմ՝ կա՛ հոգում քո այդ նզովյալ  
Քողարկված ծարավ հանդեպ քո կյանքի,  
Ուրեմն փորձի՛ր սիրել դու նրան,  
Ու կյանքն էլ գուցե այնժամ քե՛զ սիրի:

Քո իսկ ստեղծած կարծրատիպից  
Դու րս արի, դեռ քանի ժամ կա,  
Ու քո ես-ի հանդեպ վախից  
Մի՛ քարացիր ու մի՛ դողա:  
Անկ՛ եղծ ապրիր, սիրիր անկե՛ղծ,  
Լավը վատից զանազանի՛ր,  
Թե չես կարող լավը անել,  
Վատն անելուց քեզ զե՛րծ պահիր:

Մեր այս ունայն, դաժան կյանքում  
Արժանիքներ դու ունեցի՛ր,  
Ու սրբությո՛ւն, որն աշխարհում  
Ամեն ինչից դու վե՛ր դասիր:

Հեշտ է ասել, գործն է դժվար,  
Դու՛, մարդկային փո՛ւշ կարծրատիպ,  
Փորձի՛ր լինել գետ մի վարար,  
Ո՛չ թե լճակ ճախնոտ, վտիտ:

## Բալիկներիս

Այնպես կուգեի ձեր կյանքում երբեք  
Դուք չիմանայի՛ք, թե ինչ է ցավը  
Հոգու ու մարմնի, ու թո՛ղ ձեզանից  
Հեռու միշտ լինի մարդկանց նենգ դա՛վը:

Կուգեի կյանքով ծառայել իմ ձե՛զ:  
Ու թե լացեիք՝ ծիծաղից միայն:  
Թո՛ղ շա՛տ արցունքներ թեկուզ հոսեին,  
Բայց ծո՞վ խնդությա՛ն և ուրախությա՛ն:

Ապրե՛ք դուք առողջ, և դատե՛ք առողջ,  
Տարբերել գիտցեք մե՛ծ, մեռա՛ծ ու ո՛ղջ:  
Հարգանքի գինով լցված ձեր թասը  
Ըմպե՛ք մինչև վերջ, ըմպե՛ք դուք պատվով:

Հայրենիքը ձեր ու ձեր ծնողին  
Միռե՛ք անսահման, անհուն մի սիրով,  
Քանզի նրանցից ու նրանց շնորհիվ  
Դուք կա՛ք, ապրու՛մ եք, ունեք գու՛թ, կորո՛վ:

Փոքրի՛կ եք դուք դեռ, իմ լա՛վ բալիկներ,  
Բայց ընթերցում եք կյանքի գիրքը մեծ,  
Դուք իմ՝ հոգիներ, դուք ի՛մ երազներ,  
Միքում եմ ես ձեզ մե՛ծ սիրով անեղծ:

Կյանքի վառ գարնան ելեջները  
Պարուրեն թո՛ղ միշտ ձեր հոգին լուսե,  
Ու այս խենթ կյանքում ձեր ուղիները  
Լինեն թո՛ղ միշտ հարթ ու թո՛ղ չկասեն:

## Կառայիս, Գոհարիս, Սոնայիս...

Երեք գոհար ես տաշեցի,  
Իմ բազմիմա՜ստ, խորունկ կյանքում,  
Երեք հրա՜շք, երեք փերի՜,  
Այս կարեկի՜ց, մե՜ծ աշխարհում:

Նրանց ժպիտը մեղմանույշ  
Լու՛յս է տալիս իմ լույս կյանքին,  
Նրանց արցունքո՛վ եմ լալիս,  
Թե տխուր են ու մոլեգին:

Կյանքի լու՛յս են, կյանքի վառ հու՛յս  
Նրանց աչքերը սևաթույր,  
Երեք հոգի, երեք մարմին,  
Երեք հայացք բարեհամբույր:

Միրու՛մ եմ ձեզ,ի՛մ մանկիկներ,  
Լուսապայծա՜ռ, անհու՛ն սիրով,  
Կարոտո՛ւմ եմ, երբ կողքիս չեք,  
Ապրում ձեզնո՛վ, շնչում ձեզնո՛վ:

## Ձոն ազգիս ուսուցիչներին

Բանաստեղծներ՝ բոլոր ժամանակների,  
Գովերգած գարուն, անջատում ու սեր,  
Մի՞թե աշխարհում մեր այս ամեհի  
Մեզ բաժին ընկան միա՜յն մուսաներ:

Ամեն մի երկտող՝ մի բախտի վերիուշ,  
Կրկին սիրած սիրտ, հարուստ, բայց և բարդ,  
Հիվանդ պատանի, դարի հայր- քերթող,  
Թափառող աստղեր՝ փայլուն, լուսազարդ:

Սևակ ու Սահյան, Չարենց, Թումանյան,  
Դուրյան, Վարուժան, Սարյան ու Տերյան,  
Հայրե՛ր իմ ազգի, ի՛մ ուսուցիչներ,  
Խոնարհվու՛մ եմ Ձեզ, հոգու՛ մասունքներ:

Ձեր խոսքը մաքուր, անաղարտ ու սուրբ,  
Թո՛ղ իր գործն անի դեռ երկա՜ր դարեր,  
Մեր վսեմ ազգին թո՛ղ միշտ հայ պահի,  
Թո՛ղ այն թևածի աշխարհում հավերժ:

Սևակյան շնչո՛վ, Սահյանի կանչո՛վ,  
Հայաստանոտ ու առանց վարանման,  
Տերյանի տենչո՛վ, Դուրյանի շնչո՛վ,  
Ապրենք մեր հողում՝ առանց անջատման:

## Հայաստանիս

Հայրենիքի կարոտը ջերմ  
Վա՛ռ պիտ ապրի ու հավերժ,  
Ձեր հոգու մեջ ու սրտերում  
Հորդի՛ պիտի մեծ ջրվեժ:

Կյանքի բովում, շեմին մահվան,  
Ուրախ, տխուր պահերին,  
Հիշեք դուք միշտ բույրը զարնան  
Մեր հայրենյա՜ց լեռների:

Սարոյանի շունչը հիշեք,  
Որ հեռվի՜ց էր, բայց և ջերմ,  
Ու մեր ազգի մեծ հայրերի  
Ոգի՛ն անեղծ, խո՛սքը մեղմ:

Առանց մի բուռ մեր մայր հողի,  
Ասե՛լ է թե՛ առանց տուն,  
Անօթևա՛ն, բի՛րս ու վայրի,  
Էլ ի՞նչ հանգիստ, էլ ի՞նչ քուն:

Հայաստա՛ն իմ, սիրո՛ւմ եմ քեզ,  
Թեկուզ դարեր թող անցնեն,  
Հայաստա՛նն ես ու հայի՛նն ես,  
Թո՛ղ քո գովքը ես երգեմ:

Ու դալարի թո՛ղ երգը քո,  
Որ յուր ազգիդ պիտ կանչի,  
Խրոխտ որդու խրոխտ ձայնով  
Վերադարձ միշտ պի՛տ երգի:

Կգա՛ կյանքում և քեզ համար  
Լո՛ւսի, հու՛յսի մի շրջան,  
Թեկու՛զ տարի, թեկու՛զ և դար,  
Մենք կսպասե՛նք անվարան:



## Բովանդակություն

1. Մի՛ թարգմանիր ինձ.....	7
2. Իմ քեզագուրկ ես-ը.....	9
3. Լավատեսը.....	11
4. Անտարբերությամբ լցված հոգին.....	13
5. Սպասում.....	15
6. Ցուլացիկ հայելին.....	17
7. Ինքնախոստովանում.....	19
8. Փուչ խոստովանություն.....	21
9. Կարոտախոս.....	22
10. Սիրում եմ, երբ սիրում ես.....	23
11. Տրոհված հոգու ցավը.....	25
12. Հոգեխանգարմունք.....	27
13. Սիրո անգույն նկարը.....	28
14. Նորից առանց քեզ.....	29
15. Ա՜խ, ոնց էինք սիրում.....	31
16. Լուռության խորհուրդը.....	32
17. Հիշողության ձայնը.....	35
18. Հրաշք.....	36
19. Չասվա՜ծը թանկ է ավելի.....	37
20. Սիրո տնակը.....	39
21. Անենթակա.....	41
22. Գնու՜մ ես.....	42
23. Սիրուց ատելություն՝ մեկ քայլ.....	45
24. Ես ընտրում եմ գերությունը.....	46
25. Իմ հորինածը.....	48
26. Իմ անսիրտ հեռախոսը.....	50
27. Մենություն.....	52
28. Յուրօրինա՜կ է.....	54
29. Ի՜մ կատարելություն.....	55
30. Կյանքիս սցենարիստը.....	57
31. Ատում եմ սուտը.....	59
32. Հրաժեշտից առաջ.....	60
33. Իմ միակը.....	61
34. Փոխադարձաբար.....	62
35. Արժանի ես.....	63
36. Արդյոք կարո՞ղ էինք.....	64
37. Այդպես մի նայիր.....	65
38. Մեղանչում եմ.....	66
39. Սիրով հարվածը.....	67
40. Սիրո առաքյալները.....	68
41. Քո աչքերում, ծո՞վ աչքերում.....	69



42. Հույս-ը.....	70
43. Սերը չի մեռնում.....	71
44. Կորուստ.....	72
45. Ես ու իմ խռոված սիրտը.....	73
46. Պատգամ.....	74
47. Վերջին անգամ.....	75
48. Մի ամբողջ հավերժություն.....	77
49. Ուշացած.....	78
50. Մի՛ գթա ինձ.....	79
51. Անկեղծության պակասը.....	80
52. Մենամարտ.....	81
53. Քո ստվերը.....	83
54. Վերածնունդ.....	84
55. Քեզ հետ ու առանց քեզ.....	85
56. Ինքնահարցում.....	87
57. Վառված հոգին.....	89
58. Անընկեր.....	90
59. Չգտնված խրիսիրը.....	91
60. Դրժում.....	92
61. Իմ սիրո տարեդարձն է այսօր.....	93
62. Անվերջ սպասում.....	94
63. Անկոչ հյուրը.....	95
64. Քո համբույրը.....	97
65. Եկ պարզապես սիրենք.....	98
66. Կարապի երգը.....	99
67. Ներիր.....	100
68. Սեր է թե՞ պատրանք... Բնավ չգիտեմ.....	101
69. Անպատասխան.....	103
70. Խնդրանք.....	104
71. Գուցե օգնե՞ք.....	105
72. Դու ամենու՜ր ես.....	107
73. Երազ.....	109
74. Անծանոթին.....	111
75. Ձմեռ եմ ուզում.....	112
76. Հրաժեշտի երկտող.....	113
77. Դու՝ մարդկային փու՛լ կարծրատիպ.....	114
78. Բալիկներին.....	115
79. Կառայիս, Գոհարիս, Սոնայիս.....	116
80. Ձոն ազգիս ուսուցիչներին.....	117
81. Հայաստանիս.....	118

Նարինե Ավագյան

# Ես՝ առանց ինձ

Բանաստեղծություններ

Չափը՝ 60x84 1/16, թուղթը՝ լրագրային:  
Տպաքանակ՝ 500

Տպագրվել է «Ինտերպոլիգրաֆ» ՓԲԸ-ի «ՀայԴիզայն»  
Տպագրական Համալիրում



## Նարինե Սամվելի Ավագյան

Լեզվաբան, օտար լեզվի ուսուցչուհի, բանաստեղծ  
Ստեղծագործել է վաղ տարիքից: Պոեզիան և ասմունքը սիրված  
գրադմունքներն են դեռ վաղ մանկությունից: Անչափ մեծ է  
հիացմունքն ու սերը հայ գրականության քերթողների նկատմամբ:  
Իր մասնագիտությամբ և գրականությամբ զբաղվելուց բացի  
ուսումնասիրում է փիլիսոփայություն և հոգեբանություն:  
Հեղինակի առաջին գիրքն է: Նրա կարծիքով ստեղծագործելու ձիրքը  
ի վերուստ է տրվում, սակայն լավ ստեղծագործություններ ծնվում են  
միայն խիստ զգացմունքային հեղինակների կողմից: Իսկ թե որքանով  
է այս ասվածը առնչվում հենց իրեն՝ հեղինակին, հույս ունի կդատեն  
ընթերցողները...